

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ ԱՌԺՈՂԿՈՄԱՏԻ

# ՊՈՌՆԻԿ ԴԱՐՈՅԻ ԴԱՏԸ

Դարոն մեղադրվում է ՊՈՌՆԿՈՒԹՅԱՆ ՍՐԲ պարապելու յեզ կարմիր բանակային Միամիտյանի ՍԻՑԻԼԻՍՈՎ վարակելու մեջ

ՊԻՅԵՍ 2 ԳՈՐԾ.

Ռուսերենից փոխեց թժ. Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

125



Յ Ե Ր Ե Վ Ա Ն  
Տ Ր Ե Ս Տ Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Պ Ա Ր Ա Ն  
1924

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՆԱԿԱՆՈՒՄ

# ԿՈՄՍՊՈՒԾԻՆԻ ԿՈՒՆԱԿԱՆՈՒՄ

Կոմպոզիցիայի և մանկավարժության համալսարանի  
Կոմպոզիցիայի և մանկավարժության ֆակուլտետի  
Կոմպոզիցիայի և մանկավարժության կաբինետում

ԿՈՄՍՊՈՒԾԻՆԻ ԿՈՒՆԱԿԱՆՈՒՄ


Կոմպոզիցիայի և մանկավարժության համալսարանի  
Կոմպոզիցիայի և մանկավարժության ֆակուլտետի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՆԱԿԱՆՈՒՄ  
ԿՈՄՍՊՈՒԾԻՆԻ ԿՈՒՆԱԿԱՆՈՒՄ  
ԿՈՄՍՊՈՒԾԻՆԻ ԿՈՒՆԱԿԱՆՈՒՄ

5634

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Հ. ԱՌԺՈՂԿՈՄԱՏԻ



# ՊՈՌՆԻԿ ԴԱՐՈՅԻ ԴԱՏԸ

Դարոն մեղադրվում է ՊՈՌՆԻԿՈՒԹՅԱՄԲ պարապելու յեզ կարմիր բանակային Միամիսյանի ՍԻՖԻԼԻՍՈՎ վարակելու մեջ

15057  
A 8589

ՊԻՅԵՍ 2 ԳՈՐԾ.

Ռուսերենից փոխեց թժ. Ա. ՄԵԼԻԻՅԱՆ



Յ Ե Ր Ե Վ Ա Ն

Տ Ր Ե Ս Տ Ի Ա Ռ Ե Ջ Ի Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1924

Պատմիկը № 1698



# ՊՈՌՆԻԿ ԴԱՐՈՅԻ ԴԱՏԸ

**ԴԱՐՈ ՍԻՐՈՒՆՅԱՆԻ ԳՈՐԾԸ ԸՍՑ ՆՐԱ ՄԵՂԱ-  
ԴՐԱՆԲԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԱՐՍԵՆ ՄԻԱ-  
ՄԻՏՅԱՆԻՆ ՍԻՖԻԼԻՍՈՎ ՎԱՐԱԿԵԼՈՒ ՄԵՋ**

**ՊՅԻԵՍ 2 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱԴՐԵՑ  
ՌՈՒՍԵՐԵՆՆԻՑ ԲԺԻՇԿ Ա. ՄԵԼԻՔՅԱՆ**

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԵՂԱԴՐՈՂ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆ

ԴԱՐՈ ՍԻՐՈՒՆՅԱՆ 25 տարեկան, մեղադրյալ  
ՅԵՐՎԱՆԻ ՍԻՐՈՒՆՅԱՆ մեղադրյալի ազգականը  
ՄԻԱՄԻՏՅԱՆ ԱՐՍԵՆ կարմիր բանակային  
ԳՆԹՈՒՆԻ ՍԻՄԵՈՆ կարմիր բանակային Միա-

միտյանի ընկերը

ՍՈՂՈՄԵ ՎԱՍՎԱՍՅԱՆ մեղադրյալի հարեվա-

նուհին

ՌԻՍԱՆՈՂ ԳԱՐՈՒՆՅԱՆ 19 տարեկան յերիտա-

սարդ

ԵՔՍՊԵՐՏ ԲԺԻՇԿ

ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴԱՏԱՐԱՆԻ

## ՏԵՍԻԼ I

Բեմը ներկայացնում է մեկ սովորական սենյակ-  
դիմացը 2 դուռ, վորից ձախը տանում է դատավորի  
առանձնասենյակը. իսկ մյուսը՝ աջը-վկաների սենյակ-  
ը. բեմի ձախ կողմում (հանդիսականներից) դրած է  
մեկ սեղան, վորի հետևիվը դրված են 3 աթոռ դատա-  
վորների համար, սեղանի մի ծայրին՝ հանդիսական-  
ների դիմացը աթոռ մեղադրողի համար. իսկ մյուս  
ծայրին՝ աթոռ քարտուղարի համար. բեմի մեջտեղը՝  
աթոռ և մի փոքրիկ սեղան եքսպերտի համար, բեմի  
աջ պատին՝ մեկ դուռ, բեմի աջ կողմում՝ աթոռ և փոք-  
րիկ սեղան պաշտպանի համար մեկ աթոռ մեղադրյալի  
համար պաշտպանի մոտ, իսկ դրա հետևիվը նստարան-  
ներ հասարակության և վկաների համար:

Վարագույրը բարձրացնելուց առաջ ժողովրդա-  
կան դատավորը, դիմելով հասարակությանը, բացա-  
տրում է գործի հասարակական նշանակությունը և  
առաջարկում է ընտրել բաց քվեարկությամբ յերկու  
ատենակալներ դատին մասնակցելու համար. ընտր-  
վածները անցնում են բեմ:

(Բեմի վրա են բոլոր վկաները, պաշտպանը, մե-  
ղադրողը, եքսպերտը, յուրաքանչյուրն բանում է իր  
սեղը.)

ՔԱՐՏՈՒՂԱՐ. — (Ներս է մտնում ու բանում իր  
սեղը). տուժող Միամիտյանն այստեղ է:

ՄԻԱՄԻՏՅԱՆ. — Այստեղ եմ

ՔԱՐՏՈՒՂԱՐ. — Վկաներ, Գնթուհին այստեղ է:

ԳՆԹՈՒԻՆԻ. — Այստեղ եմ.

ՔԱՐՏՈՒՂԱՐ. — Սիրունյանն

ՍԻՐՈՒՆՅԱՆ.—Այստեղ եմ

ՔԱՐՏՈՒՂԱՐ.—Վասպասյանն

ՎԱՍՎԱՍՅԱՆ.—Այստեղ եմ

ՔԱՐՏՈՒՂԱՐ.—Գարունյանն

ԳԱՐՈՒՆՅԱՆ.—Այստեղ եմ

ՔԱՐՏՈՒՂԱՐ.—Եքսպերտ բժիշկ

ԵՔՍՊԵՐՏ.—Այստեղ եմ

(Քարտուղարը անցնում է գասավորի սենյակը  
ու մի քանի բոպեյից հետո ներս է մտնում):

—Դատավորները գալիս են, վոտքի յելեք (բոլորը  
կանգնում են):

## ՏԵՍԻԼ II

(Ներս էն մտնում գասավորը, յերկու ասեճակալ-  
ները յեվ բռնում են իրենց տեղերը):

ԴԱՏԱՎՈՐ.—(գանգաւարում է) հայտնում եմ  
նիստը բացված. խնդրում եմ նստել (բոլորը նստում  
են) լավելու և քաղաքացի Դարո Սիրունյանի գործը,  
վորը մեղադրվում է պոռնիկությամբ պարապելու մեջ  
յեվ կարմիր բանակային Միամիտյանին սիֆիլիսով  
գիտակցորեն վարակելու մեջ. այս գործի բոլոր վկա-  
ները ներկա են (գիմում է նա քարտուղարին):

ՔԱՐՏՈՒՂԱՐ.—Բոլորն էլ ներկա են.

ԴԱՏԱՎՈՐ.—Հրավիրեցեք վկաներին սեղանի մոտ.

ՔԱՐՏՈՒՂԱՐ.—Վկաներ համեցեք սեղանի մոտ.

(վկաները բոլորն էլ մոտենում են գասավորի սեղանին):

ԴԱՏԱՎՈՐ.—Վկաներ լավ միտ բերեք, վոր այս-  
տեղ դուք բոլորդ էլ պարտավոր եք ասել ճիշտ, խըղ-  
ճով, չը քաշվելով վոչ ազգականությունից, վոչ էլ  
բարեկամությունից. դատը արդար վճռելու համար  
դուք պարտավոր եք պարզել բոլոր հանգամանքները

յեզ պարտավոր եք ասել միայն ու միայն ճշմարտությունը: Խոստանում եք դուք այդ.

ՎԿԱՆԵՐ.— (միասին) Խոստանում ենք.

ԴԱՏԱՎՈՐ.— Խորհրդային դատարանում յերդում չկա. բայց պարտավոր եք ստորագրել այս խոստման թերթը ի նշան այն բանի, լոր խոստանում եք ճշմարիտ խոսել. ստորագրեք (վկաները բոլորն էլ ստորագրում են բացի վասվասյանից) քաղաքացի Վասվասյան ինչո՞ւ չեք ստորագրում:

ՎԱՍՎԱՍՅԱՆ.— (բազվելով) Յես անգրագետ եմ:

ԴԱՏԱՎՈՐ.— (բարձուղարին) Դուք ստորագրեցեք անգրագետի փոխարեն (բարձուղարը ստորագրում է) տարեք վկաներին իրենց սենյակը և ներս բերեք մեղադրյալին:

ՔԱՐՏՈՒՂԱՐ.— Վկաներ հետևիցեք ինձ (վկաների հետ միասին անցնում է վկաների սենյակը, հետո նա անցնում է բեմի աջ զանգով. մի փոքր հետո այդ զանգից ներս է դալիս մեղադրյալի հետ միասին), մեղադրյալ անա ձեր տեղը. (մեղադրյալը բռնում է իր ճեղք):

ԴԱՏԱՎՈՐ.— Գործի ելությունը սա է. (կարդում է) 1923 թ. հունիսի 20-ին Յերեվանի Ժողովրդական Դատարանը գանդատ է տալիս կարմիր բանակային Արսեն Միամիտյանը Դարո Սիրունյանի վրա, լորը ապրում է Լենինի փողոցում. Միամիտյանի ասելով Սիրունյանը գիտեր լոր ինքը հիվանդ է ու վարակել է նրան սիֆիլիսով, յերբ նա ապրիլի 20-ին յեղել է Սիրունյանի մոտ. Միամիտյանը խնդրում է իր գանդատի մեջ յենթարկել Սիրունյանին դատի պոռնիկությամբ պարասլելու և ուրիշներին գիտակ-

ցորեն վարակելու համար, մեղադրյալ Ձեր անունը:

ՍԻՐՈՒՆՅԱՆ—Դարո՞

ԴԱՏԱՎՈՐ—Հայրանունը

ՍԻՐՈՒՆՅԱՆ—Կարապետ

ԴԱՏԱՎՈՐ—Ազգանունը

ՍԻՐՈՒՆՅԱՆ—Սիրունյան

ԴԱՏԱՎՈՐ—Վորտեղացի է՞ք

ՍԻՐՈՒՆՅԱՆ—Թիֆլիզացի

ԴԱՏԱՎՈՐ—Քանի տարեկան է՞ք

ՍԻՐՈՒՆՅԱՆ—25

ԴԱՏԱՎՈՐ—Ինչով է՞ք պարապում

ՍԻՐՈՒՆՅԱՆ—Վորոշ պարապմունք չունեմ

ԴԱՏԱՎՈՐ—Դուք մեղավոր ընդունում ե՞ք ձեզ:

Վոր պարապում եք պոռնիկուլթյամբ և դիտակցորեն վարակել եք Միամիտյանին:

ՍԻՐՈՒՆՅԱՆ—Վոչ, մեղավոր չեմ

ԴԱՏԱՎՈՐ—Նստեցեք (Սիրունյանը նստում է)

Մեղադրող. (դատավորին) Թույլ տվեք հարց տալ մեղադրյալին

ԴԱՏԱՎՈՐ—Խնդրում եմ.

Մեղադրող—ասացեք մեղադրյալ քանի՞ տարի յե գուք պարապում եք պոռնիկուլթյամբ.

ՍԻՐՈՒՆՅԱՆ (կանգնած) յես պոռնիկուլթյամբ չեմ պարապում:

Մեղադրող—Դուք ասում եք, վոր վորոշ պարապմունք չունեք, ասացեք խնդրեմ ապա ի՞նչ միջոցներով եք գուք ապրում:

ՍԻՐՈՒՆՅԱՆ—Մի ժամանակ տանս իրերն եյի ծախում, ապա և ծառայում եյի:

**Մեղադրող**—Վճարտեղ եյիք ծառայում:

**ՍԻՐՈՒՆՅԱՆ**—(յերկար մտածելուց հետո) ճաշարանում:

**Մեղադրող**—քանի՞ ժամանակ ե, վոր չեք ծառայում

**ՍԻՐՈՒՆՅԱՆ**—յերեք ամսից ավելի ե

**Մեղադրող**—ինչո՞ւ հեռացաք ճաշարանից, ինչո՞ւ թողեցիք դուք ձեր պաշտոնը

**ՍԻՐՈՒՆՅԱՆ**—պատճառները շատ են ... քիչ եյին վճարում, քաղցած եյի մնում:

**Մեղադրող**—իսկ մինչ այդ դուք միշտ ել ծառայել եք:

**ՍԻՐՈՒՆՅԱՆ** այո, համարյա թե միշտ

**Մեղադրող**—ուրեմն դուք միայն այս վերջին ամիսներին եք առանց գործի

**ՍԻՐՈՒՆՅԱՆ**—այո այս վերջին ժամանակը

**Մեղադրող**—յես ել հարց չունեմ (Սիրունյանը նստում ե)

**Պաշտպան**—(դատավորին) թույլ ավելք հարց առաջարկել:

**ԴԱՏԱՎՈՐ**—համեցեք խնդրեմ

**Պաշտպան**—ասացեք Սիրունյան, դուք զիտեի՞ք վոր սիֆիլիսով հիվանդ եք

**ՍԻՐՈՒՆՅԱՆ** (կանգնած) ի հարկե վոչ. յեթե յես իմանայի, անշուշտ կրժշկվեյի:

**ԴԱՏԱՎՈՐ**—նստեցեք մեղադրյալ (Սիրունյանը նստում ե). յես առաջարկում եմ հետեվյալ ձեզով քննել գործը. նախ հարցաքննել տուժողին. հետո նրա ընկերոջ՝ Գնթունուն, Սիրունյանի հարեվանուհի Վասյանին, Սիրունյանի ազգականին ու հետո պաշտ-

պանի վկա՝ ուսանող Գարունյանին, արդյո՞ք առարկութ-  
թյուն չկա սրա դեմ:

**Մեղազրոյ**—Իմ կողմից առարկություն չկա:

**Պատճապան**—Իմ կողմից յեվս չկա:

**ԴԱՏԱՎՈՐ**—(քարտուղարին) խնդրեցեք տուժող  
Միամիտյանին:

**ՔԱՐՏՈՒՂԱՐ**—(մտաենալով դիմացի աջ դռանը)  
Միամիտյան ներս համեցեք:

### ՏԵՍԻՒ, III

Նույնք և Միամիտյան: (Միամիտյանը մտաենում  
սեղանին):

**ԴԱՏԱՎՈՐ**—Ձեր անունը

**ՄԻԱՄԻՏՅԱՆ**—Արսեն

**ԴԱՏԱՎՈՐ**—Հայրանունը

**ՄԻԱՄԻՏՅԱՆ**—Պետրոս

**ԴԱՏԱՎՈՐ**—Ազգանունը

**ՄԻԱՄԻՏՅԱՆ**—Միամիտյան

**ԴԱՏԱՎՈՐ**—Վորտեպացի է՞ք

**ՄԻԱՄԻՏՅԱՆ**—Նախիջեվան դավառի Ապրակու-  
նիա գյուղից:

**ԴԱՏԱՎՈՐ**—Քանի՞ տարեկան եք

**ՄԻԱՄԻՏՅԱՆ**—20

**ԴԱՏԱՎՈՐ**—Ինչով է՞ք պարապում

**ՄԻԱՄԻՏՅԱՆ**—Կարմիր բանակային յերկրորդ

հրացանաձիգ գնդի:

**ԴԱՏԱՎՈՐ**—Դատի տակ յեղած եք

**ՄԻԱՄԻՏՅԱՆ**—Վոչ

**ԴԱՏԱՎՈՐ**—Քաղաքացի Միամիտյան, ասացեք-

ճանաչում եք դուք այս կնոջը (ցույց և ցալիս Սի-  
րուհյանի վրա.)

**ՄԻԱՄԻՏՅԱՆ.**— Ի՞նչպէս է, դա ե ինձ վարակել  
«ԻՖիլիսով

**ԴԱՏԱՎՈՐ.**— Մեղադրյալ Սիրուհեյան, քաղաքա-  
ցի Միամիտյանը յեղել է ձեզ մոտ.

**ՍԻՐՈՒՆՅԱՆ.**— (տեղից վեր կենալով չարուքյամբ  
չեզ հանգուզն ձեզով) յերբեք, յես նրան առաջին ան-  
գամն եմ տեսնում.

**ՄԻԱՄԻՏՆԱՆ.**— (վրդովված) Ի՞նչպէս թե առաջին  
անգամն. մի՞թե արդեն մոռացել ե

**ՍԻՐՈՒՆՅԱՆ.**— Այո, յերբեք չի յեղել, սուտ է  
ասում.

**ՄԻԱՄԻՏՅԱՆ.**— (Փորձ ե անում խոտելու. բայց  
դատավորը կանգնեցնում է)

**ԴԱՏԱՎՈՐ.**— Քաղաքացի Միամիտյան ի՞նչ կա-  
րող եք ասել դուք այս գործի վերաբերյալ:

**ՄԻԱՄԻՏՅԱՆ.**— Ի՞նչ կարող եմ ասել, յես կարո-  
ղեմ եմ պատմել բոլորը, ինչպէս յեղել է.

**ԴԱՏԱՎՈՐ.**— Հենց պատմեցեք

**ՄԻԱՄԻՏՅԱՆ.**— Ապրիլի 20-ին յերեկոյան պա-  
րասպնունքներից հետո յես յեզ իմ ընկեր Գնթունին  
գորանոցից դուրս յեկանք զբոսնելու, քաղաքային  
պարտիզում քիչ ման գալուց հետո նստեցինք պար-  
տիզի ներքեզի ծայրում գտնվող նստարաններից մեկի  
վրա ծխելու. մոտեցավ մեզ այս կինը յեզ սկսեցինք  
զրույցել միմյանց հետ. Սիրուհեյանը պատմեց, վոր  
ինքը ապրում է մենակ, վոր վոչ վոր չունի, ծառայում  
է. շատ սուղ դրութեան մեջ է գտնվում. վորոնում է  
մի մասնավոր պաշտոն, վոր լավ վարձատրեյին, վոր-  
պեսզի նեղութեան չքաշի: Նա իր խոսքերով այնքան  
հաճելի թվաց մեզ, վոր մենք յերկուսով ել ցանկու-

Թյուն հայտնեցինք տանել նրան տուն հասցնել. յերբ հասանք նրա բնակարանին, Սիրուենյանը ներս հրտվիրեց մեզ յեւ թեյով հյուրասիրեց. յերկար ժամանակ խոսակցում եյինք. գիշերվա ժամը 12-ին Գընթունին յեւ հս վեր կացանք հեռանալու. նա շատ խընդրեց մնալ իր մոտ գիշերը. Գնթունին չմնաց. իսկ յեւ մի փոքր տատանվելուց հետո համաձայնվեցի ու գիշերեցի. առավոտյան, զորանոց գնալուս ժամանակ Սիրուենյանը ինձնից փող խնդրեց յես տվեցի նրան ինչքան կար մտաս: Այդ դեպքից հետո ել ուրիշի մոտ չեմ յեղել: Մի քանի շաբաթից հետո հիվանդացա, գնացի բժշկի մոտասաց վոր սիֆիլիս ե յեւ սկսեցի բժշկվել. յերբ Գընթունին իմացացաւ, խորհուրդ տվեց գանգատ տալ Սիրուենյանի վրա, վոր վարակել ե ինձ սիֆիլիսով, վորպեսզի ուրիշներին ել չվարակի: Յես այդպես ել արեցի (պառուզա) ել բան չուենեմ ասելու:

ՄԵՂԱԴՐՈՂ. — Թույլ տվեք հարց տալ:

ԴԱՏԱՎՈՐ. — Խնդրեմ

ՄԵՂԱԴՐՈՂ. — Դուք չեք հիշում Սիրուենյանից քանի որ հետո ձեր վերքը յերեւաց

ՄԻԱՄԻՏՅԱՆ. — Մոտավորապես 4 շաբաթից հետո:

ՄԵՂԱԴՐՈՂ. — Քանի դեռ Սիրուենյանը փող չեք ուզել, դուք չգիտեյիք վոր պոռնիկի մոտ եք գիշերել:

ՄԻԱՄԻՏՅԱՆ. — Յես չեյի ել կասկածում:

ՄԵՂԱԴՐՈՂ. — Վճրքան փող տվեցիք դուք նրան:

ՄԻԱՄԻՏՅԱՆ. — (Քիչ մտածելուց հետո) վորքան ունեյի բոլորն ել տվեցի.

ՄԵՂԱԴՐՈՂ. — Հարցրեցիք Սիրուենյանից առողջ ե նա թե հիվանդ:

ՄԻԱՄԻՏՅԱՆ.— Հարցրեցի ասաց, վոր առողջ է  
ՄԵՂԱԴՐՈՂ.— Դրանից առաջ դուք վեներական  
ախտով հիվանդացել էք:

ՄԻԱՄԻՏՅԱՆ.— Վոչ, գնդում միշտ ել նայում են  
ու բժշկական քննության յենթարկում մեզ. հիվան-  
դներին ուղարկում են հիվանդանոց բժշկվելու, յե-  
թե յես հիվանդ լինելի, գնդում չեյին թողնի, իսկույն  
գորային հիվանդանոց կուղարկելի.

ՄԵՂԱԴՐՈՂ.— Քաղաքացի Միամիտյան դուք  
առհասարակ շուտ-շուտ եք գնում կանանց մոտ.

ՄԻԱՄԻՏՅԱՆ.— Սա առաջին անգամն էր

ՊԱՇՏՊԱՆ.— (դատավորին) Կարելի է հարց տալ

ԴԱՏԱՎՈՐ.— Համեցեք

ՊԱՇՏՊԱՆ.— Ասուցեք ինձ տուժող, յերբ պար-  
տիզում նստարանի վրա նստած եյիք, ձեզանից մի  
առաջինը խոսեց Սիրուենյանի հետ դճւք թե՛ Գնթուն-  
նին.

ՄԻԱՄԻՏՅԱՆ.— Գնթունին

ՊԱՇՏՊԱՆ.— Ինչո՞ւ սկսեց խոսել

ՄԻԱՄԻՏՅԱՆ.— Ինքը Գնթունին կասի, իսկ յես  
կարծում եմ պատճառն այն էր, վոր ուզում եյինք  
իմանալ, ինչու է Սիրուենյանը տխուր, տրտում ու  
լաց յեղած.

ՊԱՇՏՊԱՆ.— Յես ել հարց ունիմ

ՄԵՂԱԴՐՈՂ.— Յես յեմ

ԴԱՏԱՎՈՐ.— Միամիտյան նստեցեք (Միամիտ-  
յանը նստում է վկաների նստարաններից մեկի  
վրա) ընկեր քարտուղար ներս հրավիրեցեք վկա Գն-  
թունուն.

ԲԱՐՏՈՒՂԱՐ.— (մոտենում է վկաների դռանը)  
ընկեր Գնթունի համեցեք.

## ՏԵՍԻԼ IV

Ներս և մտնում Գնթուհին և մտնե-  
նում սեղանին.

ԴԱՏԱՎՈՐ.— Ձեր ազգանձնը

ԳՆԹՈՒՆԻ.— Գնթուհի

ԴԱՏԱՎՈՐ.— Անձնը

ԳՆԹՈՒՆԻ.— Սիմեոն

ԴԱՏԱՎՈՐԸ.— Հայրանձնը

ԳՆԹՈՒՆԻ.— Պողոս

ԴԱՏԱՎՈՐ.— Վարտեղացի էք

ԳՆԹՈՒՆԻ.— Նախիջեվան գավառի Ապրակունիս

գյուղից

ԴԱՏԱՎՈՐ.— Քանի տարեկան էք

ԳՆԹՈՒՆԻ.— 25

ԴԱՏԱՎՈՐ.— Վարտեղ էք ծառայում

ԳՆԹՈՒՆԻ.— Յես 2-րդ հրացանաձիգ գնդի կար-  
միր բանակային եմ

ԴԱՏԱՎՈՐ.— Դատի տակ յեղել էք

ԳՆԹՈՒՆԻ.— Վոչ

ԴԱՏԱՎՈՐ.— Ի՞նչ կախող էք ասել ես զործի մա-  
սին

ԳՆԹՈՒՆԻ.— Ապրիլի 20-ին յես ու Միամիտ-  
յանը նստած եյինք պարտիզում, մեզ մտեցավ Սի-  
րուսյանը ու սկսեց զրույցել. բավականին ժամանակ  
զրույցելուց հետո Սիրուսյանը խնդրեց իրեն տուն  
տանել ու մենք ուղեկցեցինք նրան մինչեւ նրա բնա-  
կարանը, վորը գտնվում է Լենինի փողոցում, դրան  
մտա Սիրուսյանը խնդրեց ներս մտնել ու մի բաժակ  
թեյ խմել, թեյից հետո յես յեկա զորանոց, իսկ Միա-  
ամիտյանը մնաց նրա մտա գիշերելու.

ԴԱՏԱՎՈՐ.—Միամիտյանին լավ էք ճանաչում.

ԳՆԹՈՒՆԻ.—Յես նրան ճանաչում եմ մանկու-  
թյունից, մենք մի գյուղից ենք. մաքուր, ազնիվ և  
ուրախ տղա յե: Սիրունյանից մի քանի շաբաթ հե-  
տո յես նկատեցի, վոր Միամիտյանը տխուր և յեվ  
մի բան և թագցնում ինձանից. յես կարծեցի հարս-  
նացվին և կարոտել, դրա համար ել շաշխատեցի պատ-  
ճառն իմանալ. զորանոցում մեր տեղերը իրար մոտ  
են. մի գիշեր զարթնեցի յեվ ինչ տեսնեմ՝ Միամիտ-  
յանը նստած և իր տեղում ու լալիս և սկսեցի, հարց  
ու վորձ անել: Միամիտյանը սկզբում չեր ուզում ա-  
սել. վերջապես խոստովանվեց, վոր նա հիվանդ և  
սիֆիլիսով. յեվ վարակվել ևր պարտիզում ծանոթու-  
ցած կնոջից, վորովհետեւ նա ուրիշի մոտ իր կյան-  
քում յերբեք չի յեղել, յես սկսեցի մխիթարել նրան:  
Յես այդ հիվանդության մասին թե լսել եմ դասախո-  
սություններ, և թե կարդացել եմ—ու գիտեմ, վոր դա  
արատավոր բան չե, վոչ ել վտանգավոր—յեվ բուժելի  
և կտրականապես. սկսեցի համոզել նրան, վոր չմտա-  
ծի, դիմի բժիշկին ու բժշկվի, վոր ազատվի այդ վոր-  
ձանքից: Իսկ վորպէսզի Սիրունյանը ուրիշներին ել չը  
վարակի, խորհուրդ տվեցի՝ դիմել դատարան յեվ գան-  
գատ տալ Սիրունյանի վրա:

ԴԱՏԱՎՈՐ.—Նեք հիշում արդե՞ոք Սիրունյանի  
մոտ լինելուց վորքան ժամանակ հետո Միամտյանը  
հիվանդացավ.

ԳՆԹՈՒՆԻ.—Մոտավորապես 4 շաբաթից հետո

ԴԱՏԱՎՈՐ.—Կողմերը հարց ունի՞ն տալու

ՄԵՂԱԴՐՈՂ.—Թույլ տվեք. Գնթունի ասացեք

խնդրեմ. ի՞նչու դուք գնացիք Սիրունյանի մոտից.  
Իսկ Միամիտյանին թողեցիք նրա մոտ.

ԳՆԹՈՒՆԻ.— Յես չի յի ուզում մնալ. իսկ Միամիտ-  
յանը չեր ուզում գալ.

ՄԵՂԱԴՐՈՂ.— Ասացեք մեզ վկա. դուք դուցե  
գնացիք նրա համար, վոր Սիրունյանը կասկածելի  
թվաց ձեզ.

ԳՆԹՈՒՆԻ.— Այո նա ինձ շատ տարորինակ թվաց.  
շատ մեծ դանազանություն կար նրա մեջ պարտիզում  
յեւ տանը յեղած ժամանակ: Յես տեսա, վոր մաքուր  
չե.

ՄԵՂԱԴՐՈՂ.— Յերբ ծանոթացաք Սիրունյանի  
հետ, չը կասկածեցիք, վոր նա պոռնիկ է.

ԳՆԹՈՒՆԻ.— Վոչ

ՄԵՂԱԴՐՈՂ.— (դատավորին) Թույլ տվեք հարց  
տալ մեղադրյալին

ԴԱՏԱՎՈՐ.— Խնդրեմ

ՄԵՂԱԴՐՈՂ.— Քաղաքացի Սիրունյան, այս ըն-  
կերը ձեզ մոտ յերբեվիցե յեղել է.

ՍԻՐՈՒՆՅԱՆ.— (վերկենալով) Վոչ, չի յեղել.

ՄԵՂԱԴՐՈՂ.— Դուք նրան ճանաչում եք

ՍԻՐՈՒՆՅԱՆ.— Վոչ չեմ ճանաչում.

ՄԵՂԱԴՐՈՂ.— Դուք նրան յերբեք չեք տեսել

ՍԻՐՈՒՆՅԱՆ.— Յերբեք

ՄԵՂԱԴՐՈՂ.— Քաղաքացի Գնթունի (ցույց տա-  
լով Սիրունյանին) սա է այն կինը, վորի մոտ դուք  
Միամիտյանի հետ յեղել եք.

ԳՆԹՈՒՆԻ.— Դե իհարկե նա է (հուզված)

ՄԵՂԱԴՐՈՂ.— Իսկ ձեզ մի վորեվե մարդ տեսնի  
այդ որը, Սիրունյանի տանը

ԴՆԹՈՒՆԻ.— Ինչպես չի, հարեվանուհին, վորը  
միեվնույն ըսկում է ապրում.

ՄԵՂԱԴՐՈՂ.—(պատուզից հետո) չե՞ք հիշում դուք  
ի՞նչ կար Սիրուհւյանի հագին այն ուրը, յերբ դուք  
նրա մոտ եյիք:

ԳՆԹՈՒՆԻՆ—(մի փոքր մտածելուց հետո) ինչ  
վոր սեւ բան եր. գլխարկ կարծեմ չուներ. մի բանն  
եմ լավ հիշում՝ նրա վրա կար մութ դեղին աղլուխ  
մութ դույնի ե կողերով և անկյուններին ել թիթեռ-  
նիկներ.

ՄԵՂԱԴՐՈՂ.—Եդ դուք լավ եք հիշում

ԳՆԹՈՒՆԻ.—Լավ

ՄԵՂԱԴՐՈՂ.—(դատավորին) Թույլ տվեք հարց  
տալ մեղադրյալին

ԴԱՏԱՎՈՐ.—Համեցեք

ՄԵՂԱԴՐՈՂ.—Դուք լսեցի՞ք քաղաքացի Գնթունու  
ցուցմունքները:

ՍԻՐՈՒՆՅԱՆ—Յես հենց ուզում եմ պատասխանել

ՄԵՂԱԴՐՈՂ.—Ուրեմն ասացեք քաղաքացի Սիրուհւ-  
յան, ունեք դուք այդ տեսակի աղլուխ. վորի մասին  
ասաց այստեղ Գնթունին:

ՍԻՐՈՒՆՅԱՆ—Յերբեք ել չեմ ունեցել:

ՄԵՂԱԴՐՈՂ.—Յես ել հարց չունիմ.

ՊԱՇՏՊԱՆ.—(դատավորին) Թույլ տվեք ինձ հարց  
տալ:

ԴԱՏԱՎՈՐ.—Համեցեք

ՊԱՇՏՊԱՆ.—Ասացեք—վկա, ձեզ մոտ դասախո-  
սություն կարդում են վեներական ակտերի մասին:

ԳՆԹՈՒՆԻ.—Այո մի 4 անգամ յեղել ե

ՊԱՇՏՊԱՆ.—Դուք հաճախում եյիք այդ դասա-  
խոսություններին:

ԳՆԹՈՒՆԻ.—Այո գիտեմ եյի:

ՊԱՇՏՊԱՆ—Դուք ասացիք, վոր Միամիտյանը հարսնացու ունի, մտադիր ե նրա հետ ամուսնանալ թե վոչ:

ԳՆԹՈՒՆԻ—Յես միայն այն գիտեմ, վոր նրանք այժմ ել տեսակցություն ունենում են:

ՊԱՇՏՊԱՆ—Ընկեր Գնթունի չգիտեք դուք արդո՞ք՝ Միամիտյանը յերբեվիցե հիվանդ յեղել ե վենեբրական մի վորեվե ախտով:

ԳՆԹՈՒՆԻ—Յերբեք: Եդ ես լավ գիտեմ, յեթե նա հիվանդ լիներ զորանոցում մնալ չեր կարող, այլ հիվանդանոց կուղարկերին: Ապրիլի 1.ին բժշկական քննություն եր, յես իբրեվ կոմբլիջի անդամ, հերթապահ եյի այդ որը, և ցուցակագրում եյի քննության յենթարկված կարմիր բանակայիններին: Լավ գիտեմ, վոր Միամիտյանը բոլորովին առողջ եր:

ՊԱՇՏՊԱՆ—(դատավորին) Յես Գնթունուն այլ յեվս հարց չունիմ տալու. թույլ տվեք հարց տալ Միամիտյանին:

ԴԱՏԱՎՈՐ—Խնդրեմ

ՊԱՇՏՊԱՆ—Դուք հարսնացու ունե՞ք:

ՄԻԱՄԻՏՅԱՆ—Այո ունեմ:


ՊԱՇՏՊԱՆ.—Բայց և այնպես դուք գնացիք պոռնիկի մոտ

ՄԻԱՄԻՏՅԱՆ.—(Զի պատասխանում)

ՊԱՇՏՊԱՆ.—Գնթունին ասաց, վոր դուք տեսակցություն եք ունենում հարսնացվի հետ, չեք վախենում վարակել նրան ևս.

ՄԻԱՄԻՏՅԱՆ.—Հարսնացուս ամեն ինչ գիտե, յեվ մենք շատ զգույշ ենք.

ՊԱՇՏՊԱՆ.—Յես ել հարց չունիմ.



6858

ՄԵՂԱԴՐՈՂ.—(դատավորին) Թույլ ավերք հարց  
առաջարկել Միամիտյանին.

ԴԱՏԱՎՈՐ.—Խնդրեմ

ՄԵՂԱԴՐՈՂ.—Քաղաքացի Միամիտյան դուք պն-  
դում եք, վոր չդիտելիք թե ում հետ գործ ունեք.

ՄԻԱՄԻՏՅԱՆ.—Այո յես չդիտելի, վոր պոռնիկի  
յեմ պատահել

ԴԱՏԱՎՈՐ.—Կողմերն ել հարց չունե՞ն.

ՊԱՌՏՊԱՆ.—Յես հարց չունեմ

ՄԵՂԱԴՐՈՂ.—Յես նույնպես

ԴԱՏԱՎՈՐ.—Նստեցեք Գնթուհի (Գնթուհին նըս-  
տում ե վկաների նստարաններից մեկի վրա քարտու-  
ղարին) ընկեր քարտուղար ներս հրավիրեք վկա վաս-  
վասյանին.

ՔԱՐՏՈՒՂԱՐ.—(մոտենում ե վկաների սենյակի  
դռանը) Քաղաքացի վասվասյան, համեցեք.

## ՏԵՍԻՒՎ V

Նույնք ե վասվասյան.

ԴԱՏԱՎՈՐ.—Քաղաքացի վասվասյան մոտեցեք  
սեղանին-դուք է՞ք վասվասյանը

ՎԱՍՎԱՍՅԱՆ.—Յես եմ

ԴԱՏԱՎՈՐ.—Ձեր անձնը

ՎԱՍՎԱՍՅԱՆ.—Սալոմե

ԴԱՏԱՎՈՐ.—Վորտեղացի է՞ք

ՎԱՍՎԱՍՅԱՆ.—Յերեվանցի

ԴԱՏԱՎՈՐ.—Քանի տարեկան եք

ՎԱՍՎԱՍՅԱՆ.—44

ԴԱՏԱՎՈՐ.—Ամուսին ունե՞ք

ՎԱՍՎԱՍՅԱՆ.—Այրի յեմ

ԴԱՏԱՎՈՐ. — Յերեխաներ ունե՞ք

ՎԱՍՎԱՍՅԱՆ. — Ունիմ մի տղա, կնոջ հետ ինձ  
մտա ե տարոււմ.

ԴԱՏԱՎՈՐ — Հասարակական ձեր դրությունը:

ՎԱՍՎԱՍՅԱՆ — Ինչպե՞ս

ԴԱՏԱՎՈՐ — Ինչով ե՞ք պարտաւում

ՎԱՍՎԱՍՅԱՆ — Ախ ինչով, տնային տնտեսու-

թյամբ:

ԴԱՏԱՎՈՐ — Ինչ գիտեք այս գործի մասին

ՎԱՍՎԱՍՅԱՆ — Ինչ լավ բան կարելի յի տպասել

ես փշացածից

ԴԱՏԱՎՈՐ — Քաղաքացի վասվասյան մի մոռա-

ցեք, վոր դուք դատարանում եք գտնվում:

ՎԱՍՎԱՍՅԱՆ — այո՛, ինչպես չե.

ԴԱՏԱՎՈՐ — (ընդհատելով) կրկին անգամ խըն-  
դրում եմ ձեզ. դուք Սիրուհյանին վաղուց եք ճա-  
նաչում

ՎԱՍՎԱՍՅԱՆ — Այն որվանից, յնրբ անցավ մեր

բակը

ԴԱՏԱՎՈՐ — Յերբ ե յեկել նա ձեր բակը

ՎԱՍՎԱՍՅԱՆ — Նոր տարուց հետո

ԴԱՏԱՎՈՐ — Ինչով ե պարտաւում Սիրուհյանը

ՎԱՍՎԱՍՅԱՆ — Պարզ ե թե ինչով

ԴԱՎԱՎՈՐ — Նա ծառայում եր մի վորեվե տե-

ղում:

ՎԱՍՎԱՍՅԱՆ — Մի՞թե դա ծառայությունն չե,

ցերեկը քնել, իսկ գիշերները թրեվ գալ:

ԴԱՏԱՎՈՐ — Տղամարդիկ դալի՞ս են քաղաքացի

Սիրուհյանի մոտ:

ՎԱՍՎԱՍՅԱՆ — Ամեն յեռեկո

- ԴԱՏԱՎՈՐ—Դուք տեսել ե՞ք  
 ՎԱՍՎԱՍՅԱՆ—Ապա ինչպես, ինքս եմ տեսել  
 ԴԱՏԱՎՈՐ—Կողմերը հարցեր ունե՞ն  
 ՄԵՂԱԴՐՈՂ—Ասացե՛ք Վկա Վասվասյան, շատ  
 շուտ շուտ են գալիս Սիրուհւոյանի մոտ տղամարդիկ  
 ՎԱՍՎԱՍՅԱՆ—Հենց ամեն յերեկո  
 ՄԵՂԱԴՐՈՂ—Նրանք իրենք են գալիս, թե ինքը  
 Սիրուհւոյանն է բերում  
 ՎԱՍՎԱՍՅԱՆ—Հաճախ ինքն է բերում  
 ՄԵՂԱԴՐՈՂ—Դուք յերբեվ ե նկատել եք, վոր  
 տղամարդիկ գիշերը մնան նրա մոտ:  
 ՎԱՍՎԱՍՅԱՆ—Առաջ չեյի նկատում, բայց հե-  
 տո տեսաւ. վոր նրանք գիշերնեքնել են մնում նրա  
 մոտ: Մեկ որ, յերբ բակը մաքրում եյի, տեսա առա-  
 վոտը շատ վաղ մեկ տղամարդ թագուն դուրս յեկաւ  
 նրա մօտից:  
 ՄԵՂԱԴՐՈՂ—Սիրուհւոյանը միշտ է այդպես ա-  
 նում:  
 ՎԱՍՎԱՍՅԱՆ—Այո, այո, միշտ  
 ՄԵՂԱԴՐՈՂ—Վկա, ասացե՛ք խնդրեմ՝ Սիրուհւոյանի  
 գլխին մութ դեղին աղլուխ չեք տեսել մութ գույնի  
 կողերով, անկյուններին ել թիթեռնիկներ:  
 ՎԱՍՎԱՍՅԱՆ—Ինչպես չե, տեսել եմ:  
 ՄԵՂԱԴՐՈՂ—(դատավորին) Թույլ տվե՛ք մեղա-  
 դրյալին մի հարց տալ  
 ԴԱՏԱՎՈՐ—Խնդրեմ  
 ՄԵՂԱԴՐՈՂ—Քաղաքացի Սիրուհւոյան սա ձեք  
 հարեւանուհին ե, մեկ բակում եք դուք ապրե՞ւ:  
 ՍԻՐՈՒՆՅԱՆ—(Վերկենալով) Այո  
 ՄԵՂԱԴՐՈՂ—Ունե՞ք դուք այդպիսի աղլուխ

ՍԻՐՈՒՆՅԱՆ—Յեթե ես ունենայի, կասեյի  
 ՎԱՍՎԱՍՅԱՆ—(Մեջ ընկնելով) ել ուրիս ստում,

դու չեյիր պարծենում վոր ուսանողն ե նվիրել:

ՍԻՐՈՒՆՅԱՆ—Յես վոչ մի աղլուխ չեմ ունեցել,  
 դու ես սուտ ասում

ՎԱՍՎԱՍՅԱՆ—(Տեղում անհանգիստ շարժումներ ե անում):

ՄԵՂԱԴՐՈՂ—(ցույց տալով ԳՆՔՈՒՆՈՒ յեվ ՄԻ-  
 ամիսյանի վրա) Ասացեք վկա այս ընկերները յեղել  
 են Սիրուենյանի մոտ:

ՎԱՍՎԱՍՅԱՆ—Ի հարկե յեղել են

ՄԵՂԱԴՐՈՂ—Ձե վոր շատերն են գալիս Սիրու-  
 ենյանի մոտ, եգ ինչպես ե, վոր սրանց հիշում եք:

ՎԱՍՎԱՍՅԱՆ—Այ ես մեկի (Յուրց տալով ԳՐՆ-  
 քուճու վրա) ձայնը շատ նման ե յեղբորս ձայնին.  
 քակից անցնում եր հենց իմացա յեղբայրս ե, ու շ  
 յերեկո եր, շփոթեցի. ձայն տվեցի նա մոտեցավ ու  
 ակսեցինք խոսել (դիմելով ԳՆՔՈՒՆՈՒՆ) ճիշտ չե՞:

ԳՆՔՈՒՆՈՒՆ—(տեղից) ճիշտ ե մայրիկ, ճիշտ ե:

ԴԱՏԱՎՈՐ—(Պատասխանին) դուք հարցեր ունեք:

ՊԱՇՏՊԱՆ—Յես հարց չունեմ:

ԴԱՏԱՎՈՐ—(Քարտուղարին) խնդրեցեք վկա Յեր-  
 վանդ Սիրուենյանին (Վասվասյանին), քաղաքացի  
 Վասվասյան նստեցիք, (Վասվասյանը նստում ե վկա-  
 ների տեղում):

ՔԱՐՏՈՒՂԱՐ—(Մոտենում ե վկաների սենյակի  
 դռանը), քաղաքացի Սիրուենյան համեցեք

## ՏԵՍԻՎ VI

Ներս ե մտնում Սիրուենյանը:

ԴԱՏԱՎՈՐ—Ձեր անունը

ՍԻՐՈՒՆՅԱՆ—Յերվանդ

ԴԱՏԱՎՈՐ—Ազգանունը

ՍԻՐՈՒՆՅԱՆ—Սիրունյան

ԴԱՏԱՎՈՐ—Վորտեղացի՞ յեք

ՍԻՐՈՒՆՅԱՆ—Թիֆլիզեցի

ԴԱՏԱՎՈՐ.—Ամուսնացած եք:

ՍԻՐՈՒՆՅԱՆ.—Վոչ ամուրի եմ:

ԴԱՏԱՎՈՐ.—Ինչո՞վ եք պարապում:

ՍԻՐՈՒՆՅԱՆ.—Կոշկակար եմ:

ԴԱՏԱՎՈՐ.— Ի՞նչ կարող եք ցույց տալ այս

գործի մասին:

ՍԻՐՈՒՆՅԱՆ.—Դարո՞ն իմ մոտ ազգակիցներս  
և դեռ փոքր հասակից նա տարորինակ եր պահում  
իրեն, յերեվի շատ յերես տալուց, հոր մահից հետո  
շատ վատ եյին ապրում, մտավ ծառայության մի տան  
մեջ, բայց տան տիրոջ վորդուց հղիանալու պատճա-  
ռով գործից հեռացրին: Տնեցիք ել չընդունեցին նրան  
և այդ որից նա ընկավ փողոց, նա տնից հեռացավ  
քուրորդին ու գնալով ավելի փչացավ: Մայրը ստի-  
պեց տուն վերադառնալ, յեկավ մի քանի որ մնաց ու  
ելի հեռացավ:

ԴԱՏԱՎՈՐ.— Ի՞նչով եր զրադվում նա, դիտեք  
դուք:

ՍԻՐՈՒՆՅԱՆ.—Նա պոռնկատանն եր, ուներ դե-  
ղին տոմս:

ԴԱՏԱՎՈՐ.—Հարցե՞ր ունեք:

ՄԵՂԱԴՐՈՂ.—Այո, թույլ տվեք. մեղադրյալ  
լսեցիք՝ ինչ ասաց ձեր ազգակիցը, ի՞նչ կասեք սրտ-  
մասին:

ԴԱՐՈ.—(Վեր ե կենում տեղից. հուսակցուր  
յեզ արսասվախառն արսասանում ե) Պոռնկատանն ել  
եմ յեղել ես, դեղին տոմս ել եմ ունեցել ես.

ՊԱՇՏՊԱՆ.—Ի՞նչպես ընկաք պոռնկատուն:

ԴԱՐՈ.—Հղիությունից հետո գործից հեռացրին  
ինձ. ծննդաբերության համար մտա ծննդաբերական  
տունը, վորից հետո գրությունս ավելի վատացավ. ինձ  
հարկավոր եր՝ կամ յերեխային վոչնչացնել, կամ ինքս  
կորչել. և յերեխային փրկելու համար յես զոհեցի ինձ:

ՊԱՇՏՊԱՆ.—Ո՞ւր ե յերեխան:

ԴԱՐՈ.—Յես յերկար չկարողացա պահել նրան,  
տվեցի ոտնավի. նա լավ չնայեց ու յերեխան մեռավ:

ՊԱՇՏՊԱՆ.—(Գարոյից) Ի՞նչ ծնողներ ունե՞ք:

ԴԱՐՈ.—Վոչ յերկուսն ել մեռել են:

ՊԱՇՏՊԱՆ.—Ի՞նչից մեռավ հայրդ

ԴԱՐՈ.—Հայրս հարբեցող եր. մի որ հարբած  
տեղը մեռավ:

ՊԱՇՏՊԱՆ.—Իսկ մայրդ:

ԴԱՐՈ.—Մայրս մեռավ գժանոցում:

ՊԱՇՏՊԱՆ.—Յեղբայր կամ քույր ունե՞ք դուք.

ԴԱՐՈ.—Քույր չունեմ, ունիմ մի յեղբայր, վորը  
գինեաներումն ե անցկացնում իր որը:

ՊԱՇՏՊԱՆ.—Յես ուրիշ հարց չունիմ:

ԴԱՏԱՎՈՐ.—(Յերվանդ Միրունյանից) Վկա  
նստեցեք (նստում ե. Բարսուղարից) ներս խնդրեցեք  
վկա ուսանող Գարունյանին:

ԲԱՐՏՈՒՂԱՐ.—(Մոտենում ե վկաների սեցյա-  
կի դռանը) Վկա Գարունյան:

## ՏԵՍԻԼ VII

(Ներս և մեհոււմ Գարոււնյանը)

ԴԱՏԱՎՈՐ.— Դձեք եք ուսանող Գարոււնյանը

ԳԱՐՈՒՆՅԱՆ.— Այո, յես եմ

ԴԱՏԱՎՈՐ.— Ի՞նչ գիտեք այս գործի մասին

ԳԱՐՈՒՆՅԱՆ.— Յես Սիրոււնյանին ճանաչում եմ մտա 4 տարի. մի ժամանակ մենք մի բակում եյինք ապրում. նա անբարոյական չե. նա թշվառ, անոգնական ու թույլ մարդ է: Յես փորձեցի ոգնել նրան, բայց ուշացել եյի. հենց ցափն ել նրանումն է, վոր վոչ վոք չուզեց նրան ոգնել. նա ընկաւ ու գնալով ավելի վերջացաւ.

ԴԱՏԱՎՈՐ.— Ո՞վ ունի հարց

ՊԱՇՏՊԱՆ.— Թույլ տվեք (դատավորը գլխով համաձայնութեան նշան ե տալիս) ուրիշ ի՞նչ գիտեք Սիրոււնյանի կյանքից. իր դրացիների հետ նա ինչպէս եր վարվում.

ԳԱՐՈՒՆՅԱՆ.— Այդ կողմից նա որինակելի է. յես լավ գիտեմ թե՛ ինչպէս Դարոն ոգնում եր մի պառավ կնոջ. գիտեմ նույնպէս թե՛ ինչպէս նա հոգ եր տանում մեկ բանվորի յերեխայի մասին, վորի մայրը վախճանվել եր. նա այդ յերեխային իր հարազատի պէս եր նայում: Ինքը միշտ աղքատ եր ապրում, միշտ ել կարիքի մեջ եր, բայց և այնպէս միշտ ել աշխատում եր ոգնել ուրիշներին.

ՄԵՂԱԴՐՈՂ.— (Գարոււնյանին) դուք ասացիք վոր ոգնութեան յեկաք, բայց ուշացաւ. ինչո՞ւնեք կայանում ձեր ցույց տված ոգնութեանը

ԳԱՐՈՒՆՅԱՆ.— Յես նրա համար մեկ պաշտոն

գտա. նա շատ սիրով հաճախում եր ու լավ ել կատարում եր իր պարտականությունները, բայց ստիպված եր շուտով հեռանալ.

ՄԵՂԱԴՐՈՂ. — Ինչո՞ւ, քիչ էյին վճարում

ԳԱՐՈՒՆՅԱՆ. — Ո՛ր, վոչ. հեռացավ, վորովհետև վանկարելի եր նրան ծառայել այն տեղ, նախկին ծանոթները հանգիստ չէյին տալիս նրան, ծաղրում էյին, միշտ ել հետեւում էյին նրան ու դադար չէյին տալիս: Այդ բանը շատ ջղայնացնում եր նրան ու նա ել հեռացավ,

ՄԵՂԱԴՐՈՂ. — Ձեք հիշում դուք արդյո՞ք՝ ունեւր Դարո Սիրուհյանը գլխի մուժ դեղին աղլուխ մուժ կողերով և անկյուններին ել թիթեռնիկներ:

ԳԱՐՈՒՆՅԱՆ. — Բայց մի՞թե դա գործի հետ կապ ունի

ՄԵՂԱԴՐՈՂ. — Հարցիս պատասխանեցիք.

ԳԱՐՈՒՆՅԱՆ. — Այդ յես եմ ընծայել նրան

ՄԵՂԱԴՐՈՂ. — (դատավորին) կարելի է մի հարց ասուլ մեղադրյալին

ԴԱՏԱՎՈՐ. — Խնդրեմ

ՄԵՂԱԴՐՈՂ. — Քաղաքացի Դարո Սիրուհյան (վեր ե կենում Դարոն) այժմ ժխտել չեք կարող, վոր դուք ունեք մուժ դեղին գույնի աղլուխ, մուժ կողերով, անկյուններին ել թիթեռնիկներ.

ԴԱՐՈ ՍԻՐՈՒՆՅԱՆ. — (ցածր ձայնով) Այո ունեմ

ՄԵՂԱԴՐՈՂ. — Յես-ել հարց չունիմ

ԴԱՏԱՎՈՐ. — (Դարուհյանին) նստեցեք վկա- (Դարուհյանը նստում ե վկաների մոտ). վկաների հարցաքննությունը վերջացավ. ընկեր եքսպերտ խնդրում էմ կարդալ Դարո Սիրուհյանի յեվ կարմիր բանակային

Միամիտյանի բժշկական քննութեան արձանագրութեանը:

ԵՔՍՊԵՐՏ.— (վեր ե կենում) Ինչպիսի կարգով.

ԴԱՏԱՎՈՐ.— Առաջ Միամիտյանինը, հետո Միբունյանինը.

ԵՔՍՊԵՐՏ.— (կարգում ե) I. Քաղաքացի Միամիտյանի բժշկական քննութեան արձանագրութեանը. 1923 թ, հունիսի 10-ին Յերեւան: Համաձայն ժողովրդական դատարանի քննութեան բաժնի կարգադրութեան՝ յետ բժիշկ Հայրապետյանս յենթարկեցի բժշկական քննութեան կարմիր բանակային Միամիտյանին, վորոշելու՝ հիվանդ ե նոտ արդյոք սիֆիլիսով յիվ վոր փուլի մեջ ե նրա հիվանդութիւնը. քննութեան ժամանակ հայտնի յեղավ հետեւյալը. Միամիտյանի սունանդամի թլպատի վրա կա մի անկանոն բոլորածեղ վերք. վորը միջիչ բարձր ե շրջապատող կաշվից, կարմրագույն ե, սիսեռի մեծութեան ե ե կոշտացած կողեր ունի: Վերքի կողերը՝ ուղիղ են, իսկ հատակը քրքրված ու կոշտ. վերքի հիմքը նույնպէս կոշտ ե, վորպէս կոճիկ. վոչ մի ցավ չկա, մինչեւ անգամ սխմելիս: Աճուկների գեղձերն մեծացան են ե շարված են համրիչի պէս. մարմնի ուրիշ տեղերում վոչինչ առանձնապէս չկա: Մանրագիտակով քննելիս՝ վերքի արտաթորութեան մեջ գտնված են սիֆիլիսի մանրիկներ՝ դժգույն սպիրոխետ: Այս նշանների հիման վրա պետք ե ընդունել, վոր Միամիտյանը տկար ե սիֆիլիսով առաջին փուլի, վորը կոչվում ե սիֆիլիսային առաջին վերք, կարծր, կոշտ շանկր. վերորդյալը հաստատված ե ստորագրութեամբ յիվ բժշկական անվանական կնիքով: Բժիշկ Հայրապետյան:

Ի՛. Քաղաքացի Դարո Սիրունյանի բժշկական քննութեան արձանագրութեանը 1923 թ. հունիսի 20-ին Յերեւան: Համաձայն ժողովրդական դատարանի քննութեան բաժնի կարգադրութեան՝ յետ բժիշկ Հայրապետյանս յենթարկեցի բժշկական քննութեան քաղաքացի Դարո Սիրունյանին վորոշելու՝ հիվանդ ե արդյոք նա սիֆիլիսով յեւ վոր փուլի եւ նրա հիվանդութեանը: Քննելիս յերեւաց հետեյալը. Դարո Սիրունյանի մարմնի վրա, կուրծքի յեւ թեւերի վրա, ափերի մեջ, յերկու ներքանի վրա կան փոքրիկ բշտիկներ զանազան մեծութեան սկսած ցորենի հատիկից մինչեւ վոսպի մեծութեանը. բշտիկները պղնձի նման կարմիր են, խոցոտված չեն, հարթ են, խիստ առանձնացած են շրջապատող կաշվից յեւ ունեն կոշտ հիմք. բերանի մեջ կան զանազան մեծութեան սպիտակ գույնի տափակ բշտիկներ. մեկը-մեկու կաշող տեղերում, որինակ՝ ստինքների տակ, սեռական գործարանների վրա, կուների տակ նույնպէս կան բշտիկներ. վորոնք թաց են, ծածկված են գորշագույն փառով յեւ զարշահոտ հեղուկ են տալիս, վորից կաշվի առողջ տեղերը քրքրվել են ու խաշվածի տեսք ունեն. այդ հեղուկի մեջ մանրադիտակով գտնվել են մեծ քանակութեամբ սիֆիլիսի մանրեններ՝ դժգույն սպիրոխեաներ: Վերոգրյալի հիման վրա պետք ե ընդունել, վոր քաղաքացի Դարո Սիրունյանը հիվանդ ե սիֆիլիսով ամենավարակի՝ յերկրորդ փուլի, վորը կոչվում ե յերկրորդ կամ ցաների փուլ, վորը հաստատում եմ ստորագրութեանուս յեւ բժշկական անվանական կնիքովս: Բժիշկ Հայրապետյան:

ԴԱՏԱՎՈՐ. — Ո՞վ ե ցանկանում հարց տալ եքսպերտին

ՄԵՂԱԴՐՈՂ. — Թույլ տվեք

ԴԱՏԱՎՈՐ. — Խնդրեմ

ՄԵՂԱԴՐՈՂ. — Կարելի չե արդյո՞ք քննության արձանագրությունների հիման վրա հաստատել, վոր Սիրուհյանը վարակել ե Միամիտյանին սիֆիլիսով: ԵՔՍՊԵՐՏ. — Արձանագրությունների հիման վրա

չի կարելի ասել, թե Սիրուհյանն ե վարակել Միամիտյանին սիֆիլիսով, յեթե մենք վերցնենք մի քանի հիվանդների վերքերի ու խոցիկների արտաթորությունը ու քննենք մանրադիտակով, բոլորի մեջ ել կգտնենք սիֆիլիսի մանրեններ, վորոնք կոչվում են սպիրոխետներ: Ետ սպիրոխետները բոլորն ել միատեսակ են ե մեկը մյուսին նման, բոլորովին անկախ այն քանից վոր հիվանդից են վերցրած նրանք, ուստի ասել թե վոր սպիրոխետներն են առաջ բերել մյուսներին, վոր հիվանդի սպիրոխետներն են ընկել առողջի վրա ու վարակել նրան ի հարկե անկարելի չե:

ՄԵՂԱԴՐՈՂ. — Խնդրում եմ ասել բժշկական վորպիսի տվյալների հիման վրա կարելի չե հաստատել, վոր Սիրուհյանն ե վարակել Միամիտյանին:

ԵՔՍՊԵՐՏ. — Դա կարելի չե հաստատել նրանով թե յերբ ե յեղել Միամիտյանը Սիրուհյանի մոտ ե քանի որից հետո Միամիտյանի վրա յերեվացել են հիվանդության նշանները: Մենք գիտենք, վոր Միամիտյանը իր կյանքում մեկ անգամ ե յեղել կնոջ մոտ, ապրիլի 20-ին, այդ կինը Դարո Սիրուհյանն ե Միամիտյանը մինչեվ այդ օրը վոչ մի վեներական հիվանդություն չի ունեցել: Ապրիլի մեկին նրան քննել են զորանոցում ե գտել են առողջ. ապրիլի 20-ին նա գիշերել ե Սիրուհյանի մոտ: առանց իմանալու թե՞

ուժ հետ գործ ունի: Ուղիղ մեկ ամսից հետո Միամի-  
տյանի վրա յերեւոյժ ե փոքրիկ վերք և այդ վերքը  
ժամանակի ընթացքում ընդունում ե այն կերպը,  
վորը տեսանք մենք արձանագրութեան մեջ: Այս տը-  
վյալների հիման վրա պետք ե ընդունել վոր Միամի-  
տյանին Սիրունյանն ե վարակել:

ՄԵՂԱԴՐՈՂ.—Չեր կարծիքով քանի՞ ժամանակ ե  
հիվանդ Սիրունյանը:

ԵՔՍՊԵՐՏ.—Ամենա պակասը 4 ամիս

ՄԵՂԱԴՐՈՂ.—Ուրեմն ապրիլի 20-ին Սիրունյանը  
հիվանդ եր սիֆիլիսով և վոր փուլի:

ԵՔՍՊԵՐՏ.—Սիֆիլիսը ունի յերեք փուլ. առաջին  
փուլը կարծր շանկրն ե, կարծր շանկրը յերեւան ե  
գալիս թույնի մտած տեղը վարակվելուց մի ամիս հե-  
տո: Վարակվել կարելի յե թե սեռական հարաբերու-  
թեան միջոցով ե թե վոչ սեռական ուղիով, որինակ՝  
համբույրից: Կարծր կամ կոշտ շանկրը սիֆիլիսի ա-  
ռաջին փուլն ե: Հատուկ դեղեր գործադրելուց հետո  
շանկրն առողջանում ե, բայց հիվանդը վոչ: Յերբեմն  
կոշտ շանկրը այնքան չնչին ե լինում, վոր հիվանդը  
վոչինչ չի նկատում ու այս շրջանը բոլորովին ան-  
նկատելի ե անցնում: Աննկատելի յե շանկրը, թե  
ակնհայտի, միևնույն ե մի յերկու յերեք ամսից  
հետո յերեւան ե գալիս սիֆիլիսի 2-րդ փուլը՝ ցանի  
շրջանը: Հիվանդի մարմնի զանազան տեղերում, գլխի  
ու յերեսի վրա, մարմնի ու թեւերի վրա և մանավանդ  
սեռական գործարանների վրա յերեւան են գալիս  
մանր բշտիկներ, վորոնք սկզբում նման են ցանի:  
Յանը զանազան մեծութեան և զանազան կերպի ե  
լինում. ցանի դուրս տալուց առաջ հիվանդը մի քանի-

որ տաքացնում եւ Յեթե հիվանդը բժշկին չի դիմում ու չի բժշկվում, այն ժամանակ ցանը շատանում եւ բշտիկները փոխվում են վերքերի, տանջում են հիվանդին մինչեւ բժշկութեան սկսելը: Միամիտյանի բժշկական քննութեան արձանագրութեանը պարզ նկարագրում եւ նրա հիվանդութեան առաջին փուլը՝ իսկ Սիդոնյանինը յերկրորդ փուլն եւ ցանի շրջանը:

**ՊԱՇՏՊԱՆ**—(Դատավորին) թույլ տվեք հարց տալ. ասացեք եքսպերտ, սիֆիլիսով յուրաքանչյուր հիվանդ ցանից առաջ միշտ կոշտ շանկր եւ ունենում: Բացի այդ, դուք ասացիք, վոր յերբեմն աննկատիլի եւ անցնում շանկրը, ցանն ել կարող եւ աննկատելի լինել թե՛ վո՛չ:

**ԵՔՍՊԵՐՏ**.—Սիֆիլիսով յուրաքանչյուր հիվանդ երկրորդ փուլից առաջ ունենում եւ առջինը. կրկնում եւ, կոշտ շանկրը սիֆիլիսի առաջին փուլն եւ, իսկ ցանը՝ յերկրորդ փուլը. ցանը կարող եւ յերբեմն մեծ քանակութեամբ լինել, իսկ յերբեմն մի քանի հատ. կան գեպքեր, յերբ թե շանկրը և թե ցանը այնքան չընչին են, վոր հիվանդի համար բոլորովին աննկատել են մնում և նա վո՛չ մի ուշադրութեան չի դարձնում թե մեկի և թե մյուսի վրա. այդ բանը կանանց հետ ավելի շուտ-շուտ եւ լինում, յերբ կոշտ շանկրը սեռական գործարանների դրսումը չե, այլ ներսումը, այդ ժամանակ բոլորովին աննկատելի եւ մնում շանկրը: Այն հիվանդները, վորոնք քիչ են հետևում իրենց առողջութեանը, անհրաժեշտ ուշադրութեանը չեն դարձնում իրենց վրա, չարաչար տուժում են իրենց այդ անփութութեան համար: Բավական չե, վոր իրենք վարակված են և չեն բժշկվում, ուրիշներին ել անգի-

տակցարար վարակում են, այ հենց այդ անփութութեան դեմ պիտի կռվենք մենք և պետք և կռվենք ամենայնուանդուն կերպով, վորովհետև և շնորհիվ այդ անփութութեան հիվանդն իր ժամանակին չի բժշկվում, ինքը իրեն կորստիե մատնում ու կրելով իրեն մեջ այգպիսի մի սոսկալի թույն, աջ ու ձախ վարակում և ուրիշներին, վորոնք դուրս են գալիս անմեղ մեղավորներ, վորովհետև միջոցներ ձեռք չեն առնում վարակվելուց պաշտպանվելու համար: Յուրաքանչյուր հիվանդ պետք և ունենա գիտակցութուն, բժշկվելու վոչ թե միայն իր կորցրած առողջութունը հետ բերելու համար, այլ և, վորն ամենա գլխավորն է, ուրիշներին չվարակելու համար: Ներկայիս կյանքի պայմանները՝ ազգաբնակչության խիտ կենցաղը, ի նշան հարգանքի ձեռքի համբուրելը, մեկ մեկու գլանակ տալը, մի գդալով ուտելը, մի բաժակից խմելը, մի սրբիչով սրբվելը, այս բոլորն ել շատ նպաստում են սիֆիլիսով վարակվելուն վոչ սեռական ճանապարհով, ուստի յուրաքանչյուր հիվանդ պարտավոր է բժշկվել և ունենալ գիտակցութուն զգույշ լինել ուրիշներին վարակելուց:

**ԴԱՏԱՎՈՐ.**— (Յածր ձայնով խորհրդակցելով ասեմակալների հետ) ընկեր եքսպերտ դատարանը ցանկանում է իմանալ ինչպիսի ընթացք ունի սիֆիլիսը և ինչպես և նա լինում,

**ԵՔՍՊԵՐՏ.**— Սիֆիլիսը շատ ծանր, լուրջ և վարակիչ հիվանդութուն է, վորը յեթե կանոնավոր չեն բշկում, քաշում և յերկար տարիներ մերթ անհայտանում, մերթ ել խիստ բռնկվում: Սիֆիլիսի սկզբնական նշանը ինչպես յես արդեն ասացի, թույնի

մտած տեղը՝ 4 շաբաթից հետո յերեւոյում ե փոքրիկ բշտիկ, վորը կամաց-կամաց մեծանում ե. շատ շուտ բշտիկի վրայից պլոկվում ե կաշին, և բշտիկը վերքի յե փոխվում, վորը խաժխաժի կամ սիսեռի մեծության ե լինում—սա ե կոշտ շանկրը, վորը սիֆիլիսի առաջին փուլն ե բնորոշում: Այդ վերքը՝ շանկրը չի ցավում. կարմիր ե, ունի կոշտ կողեր և հատուկ դրահամար ել կոշտ շանկր ե կոչվում. վերքը ժաքուր ե, շատ քիչ թարախ ունի և յերբեմն վոչ մի անհանգըստություն չի պատճառում հիվանդին: Յերը հիվանդը իսկույն դիմում ե բժշկության, վերքը շատ շուտ անցնում ե. իսկ ընդհակառակը յերբ հիվանդը չի բժշկվում, վերքի կանոնավոր ընթացքը խանգարվում ե և առաջ են գալիս զանազան բարդություններ՝ վերքը տարածվում ե, ուռում ե, սկսում ե ցավալ, թարախը շատանում ե, վերքը խորն ե ընկնում, և հիվանդի դրությունը սկսում ե վատթարանալ: 10—15 որից հետո աճուկների գեղձերը մեծանում են և ընդունում են համրիչի տեսք. թեթեւ ե վերքը, թե ծանր հիվանդը պետք ե սկսի բժշկվելը առանց սպասելու յերկրորդ փուլի նշանների յերեւոյում, վորովհետեւ միեմնույն ե վաղ թե ուշ, 3 մինչեւ 5 ամսից հետո յերեւոյում յեն ցանը և յերկրորդ փուլի մյուս նշանները: Այդ ցանը կարմիր բծերի նման ե լինում. շատ հաճախ բծերը դուրս տալուց առաջ հիվանդը տաքացնում ե, մարմինը ջարդվում, գլուխը ցավում, իսկ յերբեմն ել ցանը այնքան քիչ ե լինում, վոր միայն փորձված բժիշկը կարող ե իմանալ, վոր դա սիֆիլիս ե: Ամբողջ մարմնի ավշային գեղձերը ուռում են. պարանոցի վրա, կրո-

ների տակ, աճուկներէ, թեփերի գեղձերը բոլորն ել  
 ուսում են: Այդ ցույց ե տալիս, վոր հիվանդի արյունը  
 վարակված ե: Այդ ցանը յերբեմն բշտիկների նման ե  
 լինում, կլեպով ծածկված, վորոնց վրայից կլեպը  
 ընկնում ե ե բշտիկից գարշահատ հեղուկ ե դուրս  
 գալիս: Այս հեղուկի մի կաթը յիթե դնենք մանրադի-  
 տակի տակ, մենք անպատճառ նրա մեջ կգտնենք  
 սիֆիլիսի միկրոբներ, վորոնք սպիրոխեաներ են կոչ-  
 վում: Այդ բշտիկները կարող են յերեվալ ե հիվանդի  
 բերանի մեջ, քթի մեջ, կոկորդի մեջ ե այդ դեպքերը վա-  
 րակելու տեսակետից ավելի վտանգավոր են. հիվանդն  
 ամենեվին չի նկատում, վոր իրեն բերնի մեջ կա վերք  
 ե վարակում ե ուրիշներին համբույրի, զգալի, բաժա-  
 կի ու գլխուսկի մեջոցով. քանի հիվանդը չի սկսել  
 կանոնավոր բժշկվելը, այդ նշանները մերթ անհետա-  
 նում են, մերթ նորից յերեվում ու միայն կանոնավոր  
 բժշկվելն ե ազատում հիվանդին այդ նշանների յերե-  
 վալուց: Սիֆիլիսի յերկրորդ փուլը կարող ե մի քանի  
 տարի քաշել ե այդ փուլը ամենավտանգավոր շրջանն  
 ե հիվանդին շրջապատողների համար վարակելու տե-  
 սակետից:

Սիֆիլիսի յերրորդ փուլը կայանում ե նրա-  
 նում, վոր հիվանդի մարմնի զանազան տեղերում,  
 մանավանդ ներքին գործարանների մեջ գոյանում են  
 ուսուցքներ, վորոնք գումմա են կոչվում ե դրա հա-  
 մար ել յերրորդ շրջանը կոչվում ե գումմաների շր-  
 ջան կամ լատիններեն գումմոզ շրջան: Այդ ուսուցքնե-  
 րը զանազան մեծության են լինում, բայց ընկույզից  
 մեծ չեն: Իրանք սկզբում կոշտ են լինում, բայց հե-  
 տո, ժամանակի ընթացքում փափկում են, բացվում ե

դառնում են խոցիկներ, վորոնք չեն բժշկվում յերկար ժամանակ: Այդ ուռուցքները յերեւման են գալիս վորովնեքի և ուրիշ վասկոսաների վրա և քայքայում են դրանց, յեթե քիթի վասկոսաների վրա յեն երեւում, շատ շուտով քիթը նստում է, յեթե քիւմքի վրա են յերեւում քիւմքն և ծակվում, բերանն ու քիթի խոռոչը միանում են միմյանց հետ: Այդ ուռուցքներ կարող են յերեւալ լյարդի, թոքերի, սրտի, ստամոքսի մեջ և, հայտնվելով մի վորեւի տեղ, աստիճանաբար քայքայում են կյանքի հաձար նշանավոր այդ գործարանները, յեթե թողնենք նրանց առանց բժշկութեան: Առավել դաժան են լինում գլխի ուղեղի և վորնուղեղի (մեջքի ուղեղի) սիֆիլիսից առաջ յեկած վասսուլները: Գրանցից ամենատարածվածը վորնուղեղի վասուլն է, վորը լատիներեն կոչվում է տարես, իսկ ուսներեն սպիննայա սուխոտկա, իսկ գլխի ուղեղի սիֆիլիսը տալիս է գլխի ուղեղի հատաշաղկիմող լուծութեան, վորի ամենա առաջին հատկանիշն է ցնորվածութեանը, ուղեղը աստիճանաբար դադարում է գործելուց և հիվանդը դառնում է կենդանի մեռյալ:

ՄԵՂԱԴՐՈՂ. — Խնդրում եմ պարզել այստեղ վորքան վտանգավոր է սիֆիլիսը յեւ ինչո՞ւնն է կայանում այդ վտանգը:

ԵՔՍՊԵՐՏ. — Սիֆիլիսը ամենատարածված հիվանդութեաններից մեկն է: Ռուսաստանում կան գյուղական հասարակութեաններ, վորոնք ամբողջովին հիվանդ են սիֆիլիսով, մեզանում Ալեքսպոլի գավառն է այն վայրը, վորտեղ շատ մեծ չափով տարածված է սիֆիլիսը: Ինքը սիֆիլիսը ուղղակի կերպով մահվան պատճառ շատ քիչ է դառնում, բայց

անուղղակի կերպով ազդում և բոլոր հիվանդություններին ընթացքի վրա: Սիֆիլիսով տկարի ուրիշ հիվանդությունները, որինսակ՝ թոքերի բորբոքումը, շեղվում են իրենց կանոնավոր ընթացքից և մահվան պատճառ դառնում: Սիֆիլիսով հիվանդի սիրտը չի կարողանում գիմանալ զանազան տկարություններին և ամենաթեթեւ ինֆլուենցայի ժամանակ անգամ հրաժարվում և կանոնավոր գործելուց ու մահվան պատճառ դառնում: Սիֆիլիսով հիվանդի արյան անոթները սաստիկ փոխվում են ու զրկվում են իրենց գիմացկանությունից: Կաթվածը, սրտի պայթյունը սիֆիլիսով հիվանդների հետ 6-7 անգամ ավելի յե պատահում, քան ուրիշ հիվանդների հետ: Բայց հիվանդի համար ամենասարսափելին վոդնուղեղի փտումն և և գլխի ուղեղի լուծությունը: Այդ յերկուսն էլ անբուժելի յեն ու յերկար են տեւում: Այդ վնասումները այն որի յեն հասցնում հիվանդին, վոր մահը նրա համար միշտ գերադասելի յե կյանքից: Վոդնուղեղի փտումով հիվանդը հաճախ վերջ և դնում իր կյանքին անձնասպանությամբ, բայց գլխի ուղեղի լուծությունով հիվանդը կենդանի մեռյալ և, նա այնքան և կորցրել իր գիտակցությունը, վոր անձնասպանության մինչեվանգամ անընդունակ և: Բայց դրանով չի վերջանում բոլորը՝ սիֆիլիսը հիվանդից անցնում և գերդատտանին, նա անցնում և ժառանգներին: Սիֆիլիսով հիվանդ հղի կանանցից 90 տոկոսը վիժում են, կամ ծնում են մեռած յերեխաներ: Յեթե մինչեվ անգամ յերեխաները կենդանի են ծնվում, շատ շուտ հիվանդանում են և մեռնում, մինչեվ 6 ամսական հասակը շատ քչերն են հասնում. յեթե մնում են էլ, միշտ հիվանդ թույլ

են լինում, չեն աճում ու չեն զորանում. նրանց վրա վերքեր են դուրս գալիս, խոցիկներ են դուրս գալիս և ներքին գործարաններում, մնասելով կյանքի համար նշանավոր գործարանները, յե՛վ մահվան պատճառ դառնում: Ժառանգական սիֆիլիսը մինչե՛վ 19 տարեկան հասակն անգամ կարող է յերե՛վալ. մի խոսքով սիֆիլիսը տանում է դեպի այլասերումը, ազդարնակութ՛յան պակասումը:

**ՄԵՂԱԴՐՈՂ.** — Ընկեր եքսպերտ խնդրե՛մ ասե՛ք բուժելի է արդ՛յո՞ք սիֆիլիսը.

**ԵՔՍՊԵՐՏ.** — Սիֆիլիսը անողայման բուժելի հիվանդութ՛յուն է. շատ սակավ է պատահում, վոր սիֆիլիսը չը բուժվի: Սիֆիլիսից առաջ Եկած բոլոր այն ծանր տանջանքները, մե՛ծ մասամբ այն տեսակ հիվանդներն են ունենում, վորոնք շատ անբավարար են բժշկվել, կամ ամենեվին չեն բժշկվել: Միջին դարերում ահռելի կոտորած արեց սիֆիլիսը. դրա համար ել բժիշկներն ու գիտնականները սկսեցին լավ ուսումնասիրել նրան: Դեռ շատ հին ժամանակներից հայտնի էր, վոր սնդիկի հանքերում աշխատողների սիֆիլիսը թեթե՛վ է անցնում. միջին դարերից սկսեցին սնդիկ գործ ածել. սկզբում ծուխ էյին տալիս՝ կրակ էյին դնում, նրա վրա սնդիկ էյին ձգում աչքի շափով, հիվանդին նստեցնում էյին վրան ու լավ ծածկում. հետո գտան սնդիկի մահրամը ու սկսեցին հիվանդին բժշկել դրանով, քսելով մարմնի զանազան մասերը. հետո կաշվի տակ ներարկման ձե՛վը գտնվեց, վորը մինչե՛վ այժմ ել գործ է ածվում: Այստեղ յես ավելորդ չե՛մ համարում հիշել հայտնի պրոֆեսոր ՆԵՅՍԵՐԻ կարծիքը, վոր սիֆիլիսը վոչ թե

միայն բուժելի է, այլ և դյուրին բուժելի, միայն մեկ պայմանով, վոր բուժումը կատարվի ժամանակին և ըստ պատշաճի.

**ՄԵՂԱԴԻՐՈՂ.** — Չիք կարճ դուք ասել թե վճարան ժամանակ է տեվում սիֆիլիսի բուժումը.

**ԵՔՍՊԵՐՏ.** — Սիֆիլիսը վորպես յերկարատեվ հիվանդություն յերկար էլ ժամանակ է պահանջում բժշկվելու համար. շատ լավ է, յեթե հենց սկզբնական շրջանում, կարծր շանկրի ժամանակ, սկսել բժշկելը. այդ ժամանակ մի քանի ամիս կարող է տեվել բուժումը. յուրաքանչյուր կորցրած ժամը ավելորդ ամիսներ կը պահանջի բժշկելու համար. սիֆիլիսը բժշկում են, ինչպես ասացի, կաշվի տակ սնդիկ ներարկելով. դու անում են ամեն որ և մեկ ամիս շարունակ, վորից հետո յերկու ամիս ընդմիջում են տալիս ու նորից սկսում, և այդպես ընդհատումներով տանում են բուժումը, վորի համար հարկավոր է յերկու տարի. բայց վերջերս կատարված նոր դյուրի՝ 914 շնորհիվ, վորը լատիներեն նեոսալվարսան է կոչվում, բուժման ժամանակամիջոցը շատ կրճատված է, 8 մինչեվ 10 ամիս է հարկավոր: Այս դեպքում կաշվի տակ սնդիկ են ներարկում և միեվնույն ժամանակ արյան մեջ էլ ներարկում են 914, վորը շատ բարերար ազդեցություն է թողնում. ի հարկե կան բացառիկ դեպքեր, յերբ այդ միջոցն էլ գործադրելիս, դարձյալ 2—3 տարի է հարկավոր կատարելապես բժշկվելու համար: 914 ստանում են արտասահմանից, 606-ը այժմ գործածելի չէ, վորովհետե տեվ նա թունավոր է: 914-ը 606 ի մաքրած տեսակն է:

**ԴԱՏԱՎՈՐ.** — (ատենակալների հետ ցածր ձայ-

նով և կարճ խորհրդակցելուց հետո) Դատարանը կարեւոր և գտնուած իմանալ թե ինչպէս և մարդ վարակվում այդ ծանր ախտով, խնդրուած եմ ձեզ ասել:

ԵՔՍՊԵՐՏ.— Սիֆիլիսով կարելի և վարակվել յերկու միջոցով. առաջին՝ սեռական հարաբերութեան միջոցով, յերկրորդ՝ վոչ սեռական ուղիով՝ համբույրի, ծխախոտի և այլ իրերի միջոցով, վարուց վրա ընկել և սիֆիլիսոտի մանրենիք պարունակող թուփը, թարախը և այլն. գյուղերում, նույնպէս և քաղաքներում մանավանդ վոչ գիտակից տարրի մեջ շատենք են այդ միջոցով վարակվում:

ԴԱՏԱՎՈՐ.— Ասացեք ընկեր եքսպերտ, հաճախ են պատահում արտասեռական ուղիով ստացած սիֆիլիսի դեպքերը:

ԵՔՍՊԵՐՏ.— Այո հաճախ են պատահում: Ռուսաստանում կան նահանգներ, վորտեղ սիֆիլիսով հիվանդների 90 տոկոսը ստացել և այդ ախտը արտասեռական ճանապարհով. դա սակավ չէ և արեւմտյան Յեվրոպայում: Գերմանիայում 100-ից 10 ը այդ ճանապարհով և ստանում, ինչպէս և Մոսկվայում: Տաճկաստանում, Հունաստանում և Բուլղարիայում հիվանդների կիսից ավելին այդ կերպ են ստացել: Առանց չափազանցելու կարելի և ասել, վոր Ռուսաստանում հիվանդների կիսից ավելին այդ կերպ և ստանում սիֆիլիսը. ընդհանրապէս վորքան տգեա և, վորքան անգիտակից և հասարակութունը, այնքան անգամ և շատ և վոչ սեռական ճանապարհով ստացված սիֆիլիսը: Ռուսաստանում այդ ձեւով ստացվածը կոչվում և կենցաղային սիֆիլիս:

ԴԱՏԱՎՈՐ.— Դուք ասում եք, վոր սիֆիլիսը կեն-

ցաղային ե, գուք չեք կարող արդյո՞ք բացատրել, ինչու յե նա այդպես կոչվում:

ԵՔՄՊԵՐՏ.— Սիֆիլիսի այդ տեսակ տարածման պատճառը կյանքի պայմաններն են, նիստ ու կացն ե. մարդիկ ապրում են խիտ, ուտում են ու խմում մեկ ամանից, կանայք կերակրում են սիֆիլիսով հիվանդ ուրիշ յերեխաներին, իրենց զավակների բերանը սիֆիլիսով հիվանդ ուրիշ յերեխայի ծծակ են ճխտում. հարյուր հազարավոր մարդիկ ծխում են չը վերջացրած ուրիշի գլանակը և ծխախոտախորշը, վորոնց վրա կարող ե մնացած լինել սիֆիլիսոտի թուքը— մանրեներով, համբուրվում են միմյանց հետ, ի նշան հարգանքի համբուրում են կանանց ձեռքը առանց գիտակցելու, վոր համբուրողը կարող ե հիվանդ լինել և վարակելու՞մը վոր նա համբուրում ե: Ահա ձեզ որինակ՝ գյուղերում սովորություն կա գյուղի հովիվին որը մեկ տան կերակրել, և հովիվը ուտում ե տան անդամների հետ միասին միեմնույն ամանից, շատ ժամանակ և միեմնույն գդալով. յեթե նա հիվանդ ե, ուրեմն վարակելու յե ուրիշներին, սրանք ել մյուսներին. հովիվն կարող ե հիվանդ չը լինել, բայց մեկ որ, հիվանդի տանը ուտելիս, կարող ե վարակվել և փոխադարձաբար ուրիշ անգամ ել նա ուրիշներին կը վարակի: Մյուս որինակը՝ դիցուք գյուղացու մեկը, կամ զինվորը, կամ բանվորը մի վորեմե քաղաքի գործարանում կամ քաղաքում ապրած ժամանակ վարակվել ե սիֆիլիսով ու առանց կատարյալ բժշկվելու գնում ե տուն. պարզ ե, վոր նա տանը կնոջը վարակելու ե սեռական ճանապարհով իսկ մնացածներին վոչ սեռական. այդ հիվանդի յերեխաներն ու տնեցիք ել իրենց հերթին վարակելու են

հարեվաններին. և մեկ էլ տեսար սիֆիլիսը բռնեց  
ամբողջ գյուղը: Այդպիսի պատկերներ գյուղերում  
շատ կան. այդ պատճառով էլ այդ տեսակ սիֆիլիսը  
կոչվում և կենցաղային:

ԴՄՏԱՎՈՐ. — Ի՞նչ ասացիք, վոր սիֆիլիսով ար-  
տասեռական վարակումը կապ ունի կյանքի պայման-  
ների հետ արդյո՞ք չեք կարող ասել վոր սեռական  
վարակումն էլ կապ ունի նիստ ու կացի հետ:

ԵՔՍՊՆՐՏ. — Ի հարկե ունի. իզուր չե, վոր սի-  
ֆիլիսը հասարակական շարիք, հասարակական  
ախտ և կոչվում, վորովհետև նա սերտ կապված և  
հասարակարգի հետ: Այստեղ գլխավոր տեղը տնտե-  
սականին և պատկանում: Բոլորին էլ լավ հայտնի է,  
վոր սիֆիլիսի տարածման աղբյուրը պոռնիկությունն  
է: Ի՞նչ բան և պոռնիկությունը . . . կինը ծախում է  
և իր մարմինը և այդ դարձրել է իրեն արհեստ, հաց  
աշխատելու միջոց. ձեզ լավ հայտնի է, վոր ցարի  
ժամանակ կինը իրավունքներից զուրկ էր. նրան ծա-  
ռայության չիին ընդունում, գոյության կռվի մեջ  
նա մեծ դիմքեր չուներ, ոժտված չեք զիտությամբ.  
Կնոջ աշխատանքը գնահատվում էր շատ պակաս. կա-  
րիքը ստիպում էր կնոջը գտնել իրեն մի այնպիսի  
արհեստ, վորը վոչ գիտություն և պահանջում, վոչ էլ  
ունակություն. վիճակագրությունը ցույց է տալիս,  
վոր պոռնիկների մեծ մասը անտուն ու անտեր ազ-  
ջիկներն են, վորոնք ընկել են քաղաք գյուղից, կա-  
րիքից ստիպված. պոռնիկությունը մի այնպիսի շա-  
րիք է պետության համար, վոր անհրաժեհ է կռվել  
նրա դեմ բայց վոչ մասնավոր ու բարեգործական մի-  
ջոցներով. դա պետության գործն է և պետական

հիմքերի վրա պետք է դնել այդ պայքարը: Բայց դա  
 հարցի մի կողմն է, մյուս կողմն էլ հեռավայրն է՝  
 մենք սասցինք, վոր վեներական ախտերի և մասնա-  
 վորապես սիֆիլիսի տարածման ազդյուրը պոռնիկու-  
 թյունն է. բայց չը պետք է մոռանալ, վոր պոռնի-  
 կության մեջ չեն գոյանում այդ ախտերը, պոռնիկ  
 կանայք ծնված որից վարակված չեն վեներական ախ-  
 տերով. ուրիշներն են տալիս պոռնիկներին այդ հի-  
 վանդությունը և տարածում իրենց շուրջը: Ահագին  
 թվով կանայք տնտեսական սուղ պայմաններից ս-  
 տիպված ընկնում են մեծ մեծ կենտրոններ, վորտեղ  
 մեծ քանակությամբ ամուրի յերիտասարդներ կան:  
 Տնտեսական ծանր պայմանները թույլ չեն տալիս  
 յերիտասարդին ընտանիք ունենալ և կանոնավոր  
 կյանք վարել: Սեռական պահանջներին հագուրդ  
 տալու համար, յերիտասարդը դիմում է պոռնիկին,  
 շնորհիվ սխալ դաստիարակության, շնորհիվ անգի-  
 տակցության, կրթության պակասության և վատ ըն-  
 կերներին: Շատ տղամաղիկ ծանր նյութական պայ-  
 մաններից ստիպված, թողնում են իրենց տունը, տե-  
 դը, յերեխաներին և անցնում են քաղաք գործ ճա-  
 րելու, իրեն և ընտանիքին կերակրելու համար. ծանր  
 աշխատանքից թուլացած, նա գիշերը սեռական պա-  
 հանջներին բավարարություն տալու համար՝ դուրս է  
 գալիս փողոց և կոպեկներով գնում է պոռնիկին ու  
 նրանից էլ գնում է հիվանդություն: Ոյժ չունենա-  
 լով կանոնավոր բժկվելու, կիսատ է թողնում բու-  
 ժումը, քայքայում իր առողջությունը ու տուն  
 վերադառնալիս էլ վարակում տնեցիներին: Այսպիսով  
 սկսվում է մի կախարդական շրջան՝ պոռնիկը վարա-

կում եւ առողջ յերիտասարդին, իսկ սա իր հերթին մի ուրիշ պոռնիկի ու իր տնեցիներին: Ահա թե ինչպիսի կապ ունի սիֆիլիսը հասարակարդի հետ.

ԴԱՏԱՎՈՐ. — Ձեք կարող ասել ինչ միջոցներով կարելի ե կովել այդ չարիքի դեմ:

ԵՔՍՊՈՆԻՏ. — Յեթե պետութիւնը ցանկանում ե արմատախիլ անել վեներական ախտերը պետք ե իր վրա վերցնի անտեր մանուկներին ե գործադուրկ կանանք հողատարութիւնը, պետք ե ինքը վարի յերեխաների կրթութիւնը ու դաստիարակութիւնը, հաշմանդամների ապահովութիւնը յերեխաների պահպանութիւնը մինչեւ նրանց չամահաս դառնալը, պետք ե հսկի հարբեցողութեան ու գինեվաճառութեան վրա. քանի վոր գոյութիւն կունենան վերոգրյալ պայմանները, միշտ ել կինը կպարապի անառակութեամբ ու դրանից ել կզարգանան պոռնիկութիւնն ու վեներական ախտերը: Միեւնույն ժամանակ ամեն միջոց պետք ե գործ դնել, վոր բազմաթիվ տղամարդիկ չկտրվեն իրենց անից ու տեղից ե համախմբվեն կենդրոնները զորքի անվան տակ, իսկ հայտնի ե վոր բանակային կյանքը շատ ե նպաստում ամեն տեսակ վարակիչ հիվանդութիւններին տարածմանը: Պետք ե գյուղացուն սովորեցնել ինչպես պետք ե ապրել ե ինչպես պետք ե պահպանել առողջութիւնը, պետք ե խավարից դեպի լույսը տանել գյուղացուն, միայն գյուղացիական իշխանութիւնը կարող ե գյուղացուն դաստիարակել ու կրթել այնպես վոր նա հեռու մնա հասարակական չարիքներից: Հավատում եմ կզա այն օրը, յերբ մեր յերկրում չիլինի վեներական ախտով հիվանդ մարդ:


ԴԱՏԱՎՈՐ. — Իսկ յերբ կարելի ե հիվանդին առողջացած հաշվել:

ԵՔՍՊԵՐՏ. — Ինչպես ասացի, կանոնավոր բժշկութեան համար մաշկի տակ սնդիկ են ներարկում և միևնույն ժամանակ արցան մեջ 914 են ներարկում: Բժշկութեանը տեղում և մի ամիս, վորից հետո 2 ամիս դադար են տալիս ու նորից սկսում. են այդպես ընդմիջումներով անում են մի քանի կուրս, հայած հիվանդին և հիվանդութեան տեսակին. այսպիսի ընդմիջումներով բժշկութեանը տեղում և մոտավորապես 8—10 ամիս, վորից միայն 4—5 ամիս և ընկնում իսկական բժշկութեան վրա: Վերջին ասեղներից 4 ամիս հետո հիվանդի արյունը տալիս են հետազոտութեան. յեթե արյան մեջ կան սիֆիլիսի հետքեր, շարունակում են բժշկութեանը, իսկ յեթե արյան հետազոտութեանը բացասական հետևանք և տալիս, սպասում են և 3—4 ամսից հետո նորից արյունը տալիս են հետազոտելու: Յեթե արյան մի քանի անգամ այդպես արված հետազոտութեանը բացասական հետեվանքներ և տալիս, այն ժամանակ հիվանդին հաշվում են առողջացած, և նա կարող և ամուսնանալ, վորովհետեվ նա ամենեվին ել վտանգ չիսպառնում վոչ վոքի: Իրարանից լավը վոզնուղեղի հեղուկի հետազոտութեանն և. յեթե այդ հեղուկի կրկնակի հետազոտութեանը բացասական հետեվանքներ և տալիս, այն ժամանակ կտրականապես պետք և ընդունել, վոր հիվանդը առողջացած է:

ԴԱՏԱՎՈՐ. — Շնորհակալութեան ընկեր հքսպերտ Դատական քննութեանը վերջացած է Նախ քան կողմերի վիճաբանութեան դիմիելը, հայտարարում եմ 10 րոպե ընդմիջում. (գասավորները հեռանում են. գահիներ վոսֆի և կանգնում. քնդմիջման ժամանակ ներ-

կա յեղոյ հասարակութիւնից ցանկացողները կա-  
 րոյ են քերթկներով հարցեր տալ եմպերտին սիւնի-  
 վսի վերաբերյալ. եմպերտը բոլորին էլ հերթով պա-  
 տասխանում է):

Վարազույր:



## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 2

### ՏԵՍԻՒ 1

Պաշտպանը, մեղադրողը, վկաները, բռնում են իրենց տեղերը ներս և մտնում քարտուղարը:

ԲԱՐՏՈՒՂԱՐ.— Մնաքում եմ կանգնել դատավորները դալիս են (բոլորը կանգնում են):

### ՏԵՍԻՒ II

(Ներս են մտնում դատավորները)

ԴԱՏԱՎՈՐ.— Նիստը շարունակվում է. խոսքը պատկանում և հասարակական մեղադրողին:

ՄԵՂԱԴՐՈՂ.— (կանգնած) քաղաքացի դատավորներ, այսօր քննվում և մի այնպիսի գործ վորը ահագին նշանակութուն ունի հանրապետության բոլոր աշխատավորների համար: Միֆիլիսը և պոռնկութունը, հյուսված միմյանց հետ, կազմում են մի հանգույց և ճնշում ու խեղդում են ժողովրդի մարմինը: Այդ հանգույցն պետք է կտրվի: Այն աշխատավորները, վորոնք փշրել են կապիտալի և հարստահարության շղթաները, պետք է ազատվեն և վեներական ախտերից: Վորտեղից պետք է սկսել հարվածը: Ինչն է վեներական ախտերի տարածման պատճառը, ախտերի, վորոնք վողողել են գյուղերն ու քաղաքներն,

\*) Ծանոթ. Մեղադրողի և պաշտպանի ճառերը թարգմանված են անփոփոխ

գործարաններն ու արհեստանոցներն, վեճեցազան  
 ախտերի բուժք պոռնիկուքյունն ե. պոռնիկուքյունն  
 ե կորստյան մատնում աշխատավորներին վեճեցազան  
 ախտերից. եքսպերտը հաստատում ե մեր ժխտքը, իսկ  
 ախտբուժի գործը լավ պատկերացնում ե մեզ. այդ:  
 Պոռնիկ Սիրունյանը վարակել ե սիֆիլիսով կարմիր  
 բանակային Միամիսյանին. անսպասելի բան չե այդ,  
 ուրիշ կերպ չեր ել կարող լինել: Սիրունյանը շատե-  
 րին ե վարակել, վարակել ե ե Միամիսյանին: Սի-  
 րունյանը չեր կարող հիվանդ չլինել. որը մեկի հետ  
 անցկացնելով գիշերը, անսպասձառ մի որ պետք ե վա-  
 րակվեր: Պարապելով պոռնիկուքյամբ, հիվանդ ժամա-  
 նակն ել ե պարապել իր արհեստով. նա բաժանել ե  
 ամենքին իր թույնը ե ամիլ սոսկալի հիվանդություն:  
 Սիրունյանը իր մարմինը դարձրել ե ապրանք. մի  
 կողմից համար անձնատուր ե լինում ամեն մեկին:  
 Թունավորելով իր կյանքը սիֆիլիսով ե տարածելով  
 հիվանդությունը իր շուրջը, նա նպաստել ե ժողովրդ-  
 դական այդ մեծ շարիքի ուժեղացմանը: Մենք մեղա-  
 ցրում ենք Սիրունյանին նրանում, վոր նա պարապել  
 ե պոռնիկուքյամբ, մի գործով, վորը ահագին վնաս  
 ե ամիլ աշխատավորական հանրապետությանը: Կարե-  
 լի չե արդյո՞ք նրան մեղադրել: Պոռնիկ ե նա արդյո՞ք:  
 Իսկապե՞ս նա պարապել ե պոռնիկուքյամբ: Գործի  
 սկզբում ժխտում եր ամեն ինչ, բայց վիճակների ցուց-  
 մունքից հետո, մանավանդ իր ազգականի ցուցմուն-  
 քից հետո, ինքն ել խոստովանվեց, բացատրելով թե  
 ինչը ստիպեց նրան ընկնել փողոց: Ուրեմն Սիրու-  
 նյանը պոռնիկ ե ե վոչ վոք կասկածել չի կարող:  
 Սա փաստ ե: Բայց մեղավոր ե արդյո՞ք նա. մեղավոր

եր նա, վոր ստիպված եր ծախել իր մարմինը: Այն  
 մեղավոր եր. ինչո՞ւ. պոռնկությունը հասարակական  
 ախտ ե կասեն ինձ շատերը. եքսպերտը մանրամասն  
 բացատրեց պոռնկության պատճառները: Հին, այժմ  
 փշրված, կյանքը, ստիպում եր կնոջը ընկնել փողոց  
 ե ծախել իր մարմինը, ապա ել ինչո՞ւ մեղադրել: Սի-  
 բուռնյանի կյանքը ինչպես ե ամբողջ հանրապետու-  
 թյունը, յերկու շրջան ունի՝ մեկը մինչև հեղափոխու-  
 թյունը, մյուսը հեղափոխությունից հետո: Հին կյանքը  
 խորտակված ե բանվորա-գյուղացիական արշան հե-  
 ղեղով: Ջնջված են հին բուրժուական աշխարհի փրշ-  
 րանքները ե այդ մեծ խորտակումից ծնվեց նոր  
 կյանք՝ ծանր, փշոտ, բայց ազատ, վորը տանում ե  
 մեզ դեպի նոր հեռուներ, դեպի նոր նպատակներ՝ աշ-  
 խատավորների հաղթանակը: Մի կտոր հացի դաժան  
 կարիքը, բուրժուական հասարակարգի նշանը, անո-  
 դորմ կնքով փողոց եր նետում հարյուրավոր ու հա-  
 զարավոր կանանց. գյուղերի հողազրկությունը՝ գործ  
 փնտռելու նպատակով բազմաթիվ գյուղացի գեռատի  
 աղջիկներին շալտում եր քաղաք: Այստեղ թշվառ աղ-  
 ջիկները ընկնում եյին կապիտալի թախք, վորը խլում  
 եր նրանցից բոլոր ուժերը, գնում եր մարդուն ամ-  
 բողջովին: Բուրժուաների լակոտները, տիրապետող  
 կապիտալի այդ ներկայացուցիչները, անգործությու-  
 նից ե դատարկասրտությունից մինչև վաղնուժուժը  
 այդ փշացածները գնում եյին անփորձ աղջիկներին,  
 վճարելով կոպեկներ նրանց: Սրանք մի կտոր հացի  
 համար պատրաստ եյին ամեն ինչ տալ: Կապիտալի  
 իշխունությունը մի առանձին խտությամբ պատժեց  
 կանանց. կինը ավելի բիշ վարձ եր ստանում, քան

տղամարդը պետութեան ծառայութեան մեջ համարյա  
չեյին ընդունում, մասնաւոր ձեռնարկութեան մեջ  
տղամարդկանց գերադասում եյին կանանցից և ահա  
այդպիսի պայմաններում հայտնվում են մարդիկ, վո-  
րոնք վճարում են, բայց աշխատանք չեն պահանջում.  
գնում են մարմինը, վճարում են ավելի շատ, քան  
աշխատանքի համար. յերեւման են գալիս մարդիկ վո-  
րոնց հարկաւոր են սպիտակ սարկուհիներ:

Յեւ այդ բոլորը հովանաւորում եր վաստիկա-  
նական հակոդութեան աչքը, վորը հանդիսա նայում  
եր կյանքին և որինակացնում եր մարմնի վաճառու-  
մը, տալով դեղին տոմս: Կինը հին կյանքի ճնշման  
տակ մնում եր դամբաժ իր սոսկալի արհեստին. նա  
դարձ չեր տեսնում, ուրիշ կյանքի համար ուղի  
չեր տեսնում: Խաւարը, տղիտութեանը, իրավագրկու-  
թեանը, կնոջ ստրկական դրութեանը, հազար տե-  
սակ նախապաշարումներ, տպորինի զավակ ունենալու  
խայտատակութեանը, մայրերի և յերեխաների պաշտ-  
պանութեան միջոցների բացակայութեանը, ահա բո-  
լոր այն պայմանները, վորանդից ծաղկում եր հին  
կյանքի տնտեսական ճնշման տակ ծնված պոռնկու-  
թեանը: Կարող են ասել ինձ վոր ուրիշ պատճառներ  
ել կան: Ազատութեանը, թեթեւ և շվայտ կյանքի  
փափագը, անբարոյականութեանը. սրանք ել մանր  
բուրժուական շրջանից են ստեղծել պոռնիկներ, բայց  
այդ պոռնիկները մի կտոր հացի համար չեն, դրանք  
ստոր տեսակի կանայք են, վորոնք պատրաստ են տալ  
ամեն ինչ արտաքին շքեղութեան արդ ու դարդի և  
փողի համար. եւ դրանց մասին չե խոսքը, դրանք  
մակարոյժներ են, դրանք բանվորի և գյուղացու ա-

մենակատաղի թշնամիներն են. դրանց մասին ուրիշ տեսակի խոսք կը լինի. դրանց վրա չե հիմնվելու նոր կյանքը: Պրոլետարիատը իրեն ստրկացողների հետ ունեցած պայքարի մեջ դրանց վրա չը պետք է հայտ դնի: Սիրունյանը բանվորի, աղքատի աղջիկ է. նա մեզ հարկավոր է. նա գնահատելի է, իբրեւ ներկայացուցիչ բանվոր դասակարգի յեւ մենք եւ դատում ենք ու մեղադրում վոչ անցյալի համար. անցյալում նա մեղավոր չէ:

Մենք մեղադրում ենք նրան այն բանում, վոր նա մնաց իր հին արհեստի մեջ, վոր նա չգնաց մեծ հեղափոխությունից հետո այն ուղիով, վորով ընթացան նրա յեղբայրները, մնացած աշխատավորները: Մենք մեղադրում ենք այն բանում, վոր նա մնաց հին շարքերի մեջ, վոր նա նոր կյանքի կանչին արձագանք չտվեց. յեւ շարունակեց իր սոսկալի գործը: Այժմ շատ բան է փոխվել. հինը դեռ ճնշում է, հինը դեռ զգալ է տալիս իրեն: Կյանքի նյութական դաժան պայմանները ճնշում յեւ դժվարացնում են աշխատանքը, քայց այժմ այդ պայմանները ճնշում են բոլորին հավասարապես. եւ չկա հրեշային յեւ ազան շահագործումը. եւ վոչ վոք չի ապրում ուրիշի հաշվին, ծանր աշխատանքը, աշխատանքը, միակ շինարարը նոր կյանքի, շատ ուժ է խլում, քայց մինչեւ այժմ աշխատավարձը դեռ մեծ չէ: Աղքատ, քայքայված, թշնամիների հետ ունեցած պայքարից տանջված յերկիրը, դեռ չի կարող նյութական ապահովություն ստեղծել բոլորի համար. բոլորն էլ հավասարվել են ամենակարող սով թագավորի առաջ. բոլորն էլ աշխատում են կիսատով դրության մեջ. բոլորն էլ գիտեն

ինչից և սովը, ինչից են զրկանքները, հանուն ինչի և  
 պայքարը: Հաղթութեան կամքը վառում և աշխատա-  
 վորին, հաղթութեան կամքը հերոսութեան և հասցրել և  
 տանում և դեպի հաղթութեան: Հիշենք մոտիկանցյալը  
 թե ինչպես քաղցած, մերկ բանավորները ու գյուղա-  
 ցիները փշրում էին յերկաթյա արգելքները, կանգնե-  
 ցնում էին իրենց մարմիններով տանկաները: Այդ  
 բոլորը ինչի համար եր. ինչը տարավ դեպի հաղթու-  
 թյուն. կամքը, հաղթութեան կամքը, նոր կյանքի  
 պողպատի ցանկութեանը: Իսկ ինչ և անում Սիրուն-  
 յանը այդ մեծ ու խորհրդավոր դեպքերի ժամանակ:  
 Պահ մի նա ել ուղեց նոր կյանքի մեջ՝ մտնել, մտավ  
 ծառայութեան յեւ յերկու ամսից հետո հեռացավ ու  
 ելի հին արհեստը սկսեց. ինչո՞ւ, վնասներն այն պատ-  
 ճառները, ինչը հեռացրեց նրան նոր կյանքից: Նա բա-  
 ցատրում և նրանով, վոր քիչ էին վճարում, յեւ դա  
 և բոլորը, ու Սիրունյանի համար դա բավական եր:  
 կյանքի ամբողջ նորութեանը, այն բոլորը ինչ, վոր  
 արված եր, վոչինչ եր՝ համեմատած նրա հետ, վոր քիչ  
 էին վճարում: Մայրութեան և մանկութեան պահպա-  
 նութեանը, նախապաշարմունքների վոչնչացումը, ա-  
 մուսնութեան ապատագրումը, կնոջ ապատագրումը, կնոջ  
 հավասարեցումը տղամարդու հետ, բոլորի հավասա-  
 րեցումը հեղափոխական որևեքի առաջ, բանավորների  
 և գյուղացիների դիկտատուրան, այս բոլորը նրա հա-  
 մար պակաս գին ուներ, վորովհետեւ նոր կյանքն էլ  
 նրան քիչ եր տալիս: Սրանից յեղրակացնվում և, վոր  
 աշխատանքը լավ և միայն այն ժամանակ, յերբ նրա  
 համար լավ են վարձատրում, իսկ մնացածը բոլորն էլ  
 աննշան են, միայն թե՛ վարձատրեն յեւ լավ վարձա-

տրեն. փողը հոտ չունի, և հանուն փողի հանուն կուշտ  
 կյանքի կարելի է ամեն ինչ տալ ուժ ուղղւմ ես, թե  
 հողին յեզ թե մարմինը, թե ձեռք մեկնել աշխա-  
 տավորների թշնամուն յեզ թե ձգել ահեղ կուլի պա-  
 հին մերձավորներին. ահա թե ինչն է ամենապիտա-  
 վորը: Քաղցած եին բոլորը, գյուղացիներն ու բան-  
 վորներն, բոլոր ասպարեզների ներկայացուցիչները՝  
 բժիշկները, ժողովրդական դատավորները, քաղցած  
 եին թե նրանք, վորոնք ճակատում եյին յեզ թե նը-  
 բանք, վորոնք գութանի ու դազգահի մոտին եին,  
 յերկաթուղու վրա, վառողի պահեստներում յեզ վոչ  
 վոք չձեց իր աշխատանքը, յեզ վոչ վոք չդավաճանեց  
 աշխատավորների բանակին. գիտեյին թե ինչու յեզ  
 ինչ բանի համար են քաղցած: Յեթե Սիրունյանները  
 շատ լինեյին մեր մեջ. յեթե նրանք անցնեյին ճակատն  
 ու թիկունքը, գործարաններն ու արհեստանոցներն,  
 այն ժամանակ, մեր Քրարեկամները՝ արտասահմանում  
 կուրախանային յեզ սովի ու համաճարակի չորացած  
 ձեռքը կը խեղդեր անպատճառ նրանց, վորոնք կուլի  
 դրոշակ եյին բարձրացրել: Այո մենք մեղադրում ենք  
 Սիրունյանին այն բանում, վոր նա պոռնկությամբ  
 պարապում եր մեծ հեղափոխությունից հետո: Հին  
 կյանքը անհետացել է, իսկ նորը ծաղկում է յեզ ամ-  
 բանում. յեզ մենք պիտի խիստ ու արդար կերպով  
 քնտրություն անենք, վորպեսզի ստեղծենք այնպիսի  
 մարդիկ, վորոնք իրավունք ունենան մասնակցելու սո-  
 ցիալիզմի նոր շենքի կառուցմանը: Պոր արմատներ  
 ձգած անառակությունն ու անբարոյականությունը,  
 վոճրային ծուլությունն ու անփութությունը դեպի իր  
 անձն ու հասարակությունը ստիպել են Սիրունյանին

առաջարկել իր մարմինը կարմիր բանակայինին առանց  
մտածելու թե վորպիսի մասս ե նա հասցնում իր յեղ-  
բայրներին, աշխատավորներին: Չե վոր ինքը առաջինը  
նստեց Միամիտյանի մոտ նստարանի վրա. հետո կեղ-  
ծությամբ ու խաբեությամբ դուր ե գալիս Միամի-  
տյանին: Աորամանկությամբ նա տանում ե տուն յիվ  
ստիպում նրան պիշերել իր մոտ:

Միամիտյանի մասին ել արժանի ե խոսել. նա  
ել ե հանցավոր: Ոգտվել մարդու մարմնից, գնել այն,  
ինչ վոր ամենա թանգագիննե, գնել սերը դա յիվ  
վոճրագործություն ե: Յես պնդում եմ, վոր նրա ժա-  
սին առանձին գործ պետք ե հարուցել. այն ժամա-  
նակ մենք կիմանանք ինչու՞ն ե նրա հանցանքը ե  
ինչ մեղմացնող հանգամանքներ կան: Միամիտյանը  
վարակվել ե սիֆիլիսով Միրունյանից, վորի համար  
փողոցը տնից թանգ եր: Պետք ե ասացուցել, վոր  
Միրունյանն ե վարակել Միամիտյանին, ե դա շատ  
դյուրին ե: Բժշկական վերջին քննության ժամանակ  
Միամիտյանը բուրբովին առողջ եր. նրանից հետո մի-  
այն մեկի՝ Միրունյանի հետ ե յեղել, վորը հիվանդ ե  
յեղել յերկրորդ փուլի սիֆիլիսով, մի ախտով, վորը  
շատ վարակիչ ե շրջապատողների համար ե վորը շատ  
վտանգավոր շրջանումներ. չորս շաբաթ դրանից հետո  
Միամիտյանը ստանում ե սիֆիլիս: Այս տվյալները  
վոչ վոք չի հերքել ե մենք իրավունք չունենք չը հա-  
վատալու: Եքսպերան ել ե այդպես յենթադրում: Այ-  
ժմ դիմելու յենք ամենալուրջ հարցի պարզաբան-  
մանը. հանցավոր ե արդյո՞ք Միրունյանը այն բանում,  
վոր նա վարակել ե սիֆիլիսով. գիտե՞ր նա իր հի-  
վանդության մասին, հանցավոր ե նա արդյո՞ք, վոր

գիտակցորեն իբ հիվանդությունը տվել ե ուրիշին: Այս հարցերին ել պետք ե դրական պատասխան տանք, ե պետք ե ու անհրաժեշտ ե պահանջել խըստադույն պատիժ. ե այս բանի համար ավելի քան ուրիշ վոճիրների համար: Տալ մեկին ախտ, վարակել սիֆիլիսով— դա վոճրագործություն ե, մարդասպանության հավասար, այս վոճրի մեջ քրեական սաղմ կա. չե վոր վարակել կարելի ե վրեժից. ե դա սարսափելի վրեժ կը լինի. վրեժ՝ լի սոսկալի հոգեկան ե ֆիզիկական տանջանքներով: Կարելի ե վարակել դեպի իր անձն ունեցած անվութությունից, դեպի հասարակությունը տածած մեծ անտարբերությունից ե դա կը լինի վոճիր, վորը ահագին վնաս ե հասցնում, աշխատավորների առողջությունն ե մաշում: Տնտեսական ճակատի վրա ունեցած ուժեղ կովի պահին մենք շատ ույժ ենք գործ դրել ե հիվանդությունների ճակատում. ես ճակատում մեր ամանագորեղ թշնամիների հետ ես մահացու կռիվ կա. ե միայն գիտակցությունը, ուշադրությունը, ամենորյա, ամենժամյա ուշադրությունը դեպի իր անձը, դեպի իր սեփական առողջությունը կարող ե տալ մեզ հաղթություն իսկ հիվանդություններին յեթե չը հաղթենք: մեր բոլոր տարած նվաճումները կը գառնան պարտություն, ուստի խնդրում եմ ձեզ լուրջ վերաբերվել թե՛ ինչ ե արհլ Սիրունյանը. նա տարածում ե վարակ, նա ուժեղացնում ե մեր թշնամիների ճակատը, աշխատավորների շարքերը ապականում ե, վհատեցնում, դուրս հանելով շարքից նրանց: Այդպիս ե արդյ՞՞ք: Հեռեհնք ե յեզրակացնենք. Սիրունյանը արհեստով պոռնիկ ե. նա յեղել ե սլոռնկատան մեջ, միշտ ել

յենթարկվել ե բժկական քննութեան և տեսել ե ինչպէս իր արհեստակիցները կործանվում են սիֆիլիսից: Նազիտեր, վոր սիֆիլիսը միշտ ել սպասում ե պոռնակին. սիֆիլիսը մի սուր ե պոռնիկների գլխի վրա պահած: Մենք կարող ենք չիմանալ, մենք հեռու ենք սիֆիլիսից, բայց պոռնիկը ինչպէս կրակի հետ խաղացողը, վտանգի յենթարկելով իր կյանքը, չի կարող լաւ չը ճանաչել իր թշնամուն: Սիրունյանը գիտեր, վոր ինքը հիվանդ ե, բայց և այնպէս չեր բժշկվում և ընթանում եր դեպի կորուստ: Հենց զբրա համար ել սիֆիլիսը մարդկութեան համար մի ծանր պատիժ ե: Հիվանդները գիտեն իրենց ախտի մասին ու չեն բժշկվում. կործանում են իրենց և տարածում են վարակը: Չե վոր սիֆիլիսը անբուժելի եր եր հաշվում, հատարվում եր մի հիվանդութիւն, վորը յերկար բժշկվել ե պահանջում ու այն ել ապարդյուն: Սիֆիլիսից չես պրծնի բժշկի մտա՛մեկ անգամ դնալով թույլ մարդիկ չեն ցանկանում ուղիղ նայել ճշմարտութեանը, գերադասում են ապրել ինքնախաբեյութան և անգիտութեան մեջ. և հիվանդները գերադասում են չբժշկվել, այլ սպասել վերջին, անձնատուր լինելով ճակատագրին. նրանք խորհրդավոր ապադան են հայցում: Չեն ցանկանում ներկան, այսինքն՝ գնալ բժշկի մոտ, բժշկվել, հայտնել իրենց հիվանդութեան ժասին ուրիշներին և խոստովանվել իրենց խայտառակութեան մեջ: Սիֆիլիսը յերկար ժամանակ համառ կերպով խայտառակ հիվանդութիւն ե յին համարում: Բացի այդ հիվանդները իրենց արհեստով զբաւ վել չեյին կարող, իսկ առանց արհեստի ապրել չեն կարող. արհեստի փոխելը ցանկալի չե, վորովհետեւ

ուրիշը դժվար է և անողուտ է թվում: Մեղադրում ենք  
 Սիրունյանին և այն բանում, վոր նա թագցրել է իր  
 հիվանդութունը: Նա չիր կարող չնկատել իր առողջու-  
 թյան վատանալը: Սիրունյանի հոգսը չե շրջապա-  
 տողները ինչ կլինեն: Նա իրեն համար է միայն ապ-  
 րում, իր մասին և մտածում նա միայն, և վարվում  
 է այնպես, ինչպես ինքն է ուղում, ամենեվին չմտա-  
 ծելով, վոր ինքը կարող է վարակի աղբյուր լինել  
 Սիրունյանը գիտեր, վոր ինքը հիվանդ է: Սիրունյա-  
 նը, վորը վաճառում էր իր մարմինը, չե կարող չը-  
 մտածել սիֆիլիսի մասին. նա թագցրել է իր հիվան-  
 դութունը, ինչպես թագցնում են ուրիշները, վորոնք  
 նույնպես պատժի են արժանի: Մենք պետք է ստի-  
 պենք հոգ տանել առողջության մասին, վոր այն  
 պատճառով, վոր գա անհրաժեշտ է մի մարդու կյանք  
 փրկելու համար, այլ նրա համար վոր առանց դրան  
 միտք չունի հիվանդութունների, մասնավորապես  
 սիֆիլիսի, տարածման դեմ մղվող պայքարը: Յուրա-  
 քանչյուր մարդ պետք է լինի իր պահակատեղում և  
 մենք պետք է ստիպենք ամեն մեկին ապրել այնպես,  
 վոր նրա կյանքը մահացու հարվածներ չտա կողիկ-  
 ախիլին: Ընկեր դատավորներ, յեղեք արդար, իմացեք,  
 վոր ձեր վճռին են սպասում աշխատավորները. դուք  
 ձեր վճռով պետք է ասեք, վոր պոռնկութունը վո-  
 ճիր է, վոր հիվանդութուն թագցնելը դավաճանու-  
 թյուն է. և այդ պետք է պատժվի: Վեներական ախ-  
 տերի դեմ մղվող պայքարի համար կարուկ միջոցներ  
 են հարկավոր, միջոցներ, վորոնք թելադրում են  
 միտքը և սերը դեպի պրոլետարիատը և վոր դեպի մի  
 անհատը, վորքան էլ նա արժանի լինի խղճալու: Յեւ

հավատում եմ, վոր դուք Սիրունյանին հանցավոր կճանաչեք և պարտադիր բժշկվելու ու պարտադիր աշխատանքի վճիռը կարձակեք: Այդ վճռին են սպասում ձեզնից նրանք, վորոնց համար թանկ և և կարեւոր աշխատավորներին շահը:

ԴԱՏԱՎՈՐ.— Խոսքը տալիս եմ հասարակական պաշտպանին:

ՊԱՇՏՊԱՆ.— Քաղաքացի դատավորներ շատ խիստ և խարաղանում մեղադրանքի ներկայացուցիչը իմ պաշտպանյալին: Հատարական մեղադրանքի ներկայացուցիչը պահանջում և խիստ պատիժ. բայց նախքան վճիռ կայացնելը, վճիռ, վորին սպասում են աշխատավորները, իսկ ավելի անհամբերությամբ, յերկյուղածությամբ և հույսով սպասում և մեղադրյալը, ասում եմ նախքան այդ վճիռը, մենք աշխատենք թափանցել քննված գործի ներսը և պարզել Սիրունյանի իսկական վոճիրը: Առաջին հանցանքը պոռնկությամբ պարասելն և. քաղաքացի Սիրունյանը պոռնիկ և. այդ մենք լավ գիտենք. այդ և խոստովանվեց ինքը մեղադրյալը, բայց հանցավոր և արդյժք նա դրանում. զննեցեք Սիրունյանի կյանքը և ձեզ բոլորը կլինի սլարզ ու հասկանալի. իսկ հասկանալ կնշանակի ներել: Սիրունյանի անձնական գրաման վորքան նման և վողոց նետած հարյուրավոր, հազարավոր կանանց կյանքին. մեզ անհրաժեշտ և խոսել դրա մասին, զգալ այն, զննել բոլոր մանրամասնությունները ու հետո յեզրակացություններ տնել, վորոշումներ կայացնել. վորոշումներ, վորոնք կարեւոր են վոչ միայն Սիրունյանի այլ և հազարավոր նրա նմանների համար:

Ինչպես ցայտուն և անամոթաբար պարզ տեղի  
 օւնեցավ Սիրունյանի անկումը. ինչպես կյանքը խիստ  
 և չարաչար արորում եր նրան ցեխի և տղմի մեջ, վո-  
 րից նրան չհաջողվեց դուրս գալ. 16 տարեկան հա-  
 սակում սկսվեց նրա աշխատավորական կյանքը, ա-  
 զախնու կյանքը այնպիսի անձանց մոտ, վորոնք կո-  
 պեկներ են վճարում անհավատալի աշխատանքի հա-  
 մար, վորոնք աղախնուն գրաստ են գարձնում, յեր-  
 քեք չհանգստացող կենդանի: Նրանք կյանքի տերն  
 են, գրպանները լիքը բանվորների և գյուղացիների  
 արյուն քրտինքից շինած թղթերով, նրանք և գնում  
 են կանանց. յերիտասարդ ու անփորձ Սիրունյանի  
 վրա ներգործեցին թե խարեյությամբ, թե կեղծ խոս-  
 քերով և թե խոստումներով, նրանք հաղթեցին միա-  
 մտությունը, ջահելությունը և գայթակղեցրին նրան:  
 Սիրունյանը հավատաց, վոր հաց և ստացել, սեր,  
 բայց հացի տեղ դուրս յեկավ քար: Սիրունյանի մար-  
 մնից դուրս եր մղված ուրախությունը, վերցրին նրա  
 մարմինը ուրախության համար, դվարձության հա-  
 մար, իսկ հոգին վոտնատակ տվեցին: Չգեցին մի քա-  
 նի կոպեկ և Սիրունյանին փողոց նետեցին: Ազայի  
 տղան առաջինը խփեց քարով. Սիրունյանը քիչ տա-  
 տանվեց, բայց ժողովեց իր բոլոր ուժերը, հոգով չը  
 քնկավ ու գնաց յուրայինների մոտ, վոր մոր մոտ իր  
 ցավը լա, վոր յուրախներին հեա իր կսկիծը բաժանի-  
 քայց նրա ծնողները չուզեցին իրենց գստերը հա-  
 կանալ. չհասկացան, վոր իրենց աղջիկը դեռահաս եր,  
 վոր նրան խաբել են խորամանկությամբ և սուտ  
 խոսքերով, վոր նրան վոտնատա կ են տվել: Հարկա-  
 վոր եր նրան ոգնել. ահաք և ոգնեին նրան. վախե-

ցան հարեւականների ասե-կոսեաներից և տնից նրան  
արտաքսեցին: Պետք է ոգնեին նրան. կյանքի հենց  
առաջին գոտեմարտի մեջ ազջիկը կորցրել էր ամենա-  
լավը, ամենագեղեցիկը, այսինքն՝ կեղտոտել էին նրա  
հոգին, ապականել էին նրա մարմինը. և նոր վերք  
հասցրեցին նրան, վիրավորանք՝ դուրս արեցին տնից:

Միրունյանը մտավ ծննդաբերական տունը. այն-  
տեղ նա ծնեց յերեխային, և ամեն մի կնոջ այն մեծ  
բախտավորությունը, յերեխան՝ ծանր բեռ դառավ  
գեռատի և միայնակ Միրունյանի համար: Աշխատա-  
վոր կինը մայր չը պետք է լինի: Յերեխային կերա-  
կրել է պետք: Միայն հարուստներն իրավունք ունեն-  
ընտանիք և յերեխաններ ունենալ: Միրունյանը 17  
տարեկան հասակում պետք է մի անլուծելի խնդիր  
վճռեր. նա 17 տարեկան հասակում, անողնական ու  
անտեր, յերկու խաչաձև ուղու հանդիպեց. մեկով գը-  
նար ինքն էր կորչում, բայց յերեխային էր փրկում,  
մյուսով դնար ինքը կը փրկվեր, իսկ յերեխան պետք  
է կորչեր. և նա իբրև մայր, յերկար չը մտածեց, չըն-  
տրեց, այլ յերեխային փրկել վճռեց, թեկուզ ինչ գը-  
նով էլ լինի, մինչև անգամ, յեթե կարիք լինի իրեն  
յեւթ կորցնել: Դուք կարող եք ասել, վոր նա պետք  
է յերեխային տար մանկատուն, իսկ ինքն էլ մաներ  
ժառայության: Բայց պետք է իմանալ, վոր մանկատը-  
ները, այն հին ժամանակի մանկատները, հրեշտակ-  
ների գործարաններեին: Վոչ, յերբորդ ճանապարհ չը  
կար նրա համար. նա տվեց յերեխային գյուղ, և գը-  
նաց ինքը հաց աշխատելու: Մարմնով աշխատած փո-  
ղով նա յերեխային էր կերակրում: Միրունյանը իս-  
կապան մայր էր. նա հերոսաբար կատարեց իր մեծ

պարտքը և բարձր դերը, և ահա նա, վորին մենք  
գատոււմ ենք: Սիրունյանը մոր պարտականութեան-  
ները անձնագոհ կատարողի ամենացայտուն որի-  
նակն է: Սիրունյանը հավասար չէ այն մայրերին,  
վորոնք ձգոււմ են իրենց յերեխաներին, վորոնք ըն-  
դունակ չեն կրել տանջանքներ մինչև անգամ նրանց  
համար, վորոնց իրենք են կյանք պարգևելէ, ապա  
տասցեք քաղաքացի դատավորներ հանցավոր եր նա  
արդո՞ք այն բանոււմ, վոր նա 17 տարեկան հասա-  
կոււմ փողոց ընկաւ և վոտը դրեց մի այնպիսի ճամ-  
բի վրա, վորից դժվար է հեռանալը:

Դուք գտոււմ եք և գիտեք ժողովրդի սիրտը.  
դուք ինձ հետ միասին կասեք, վոր նա անմեղ է,  
պետք է դատել հին կյանքը, պետք է դատել նրանց,  
վորոնք Սիրունյանին նետեցին փողոց. նրանց, վո-  
րոնք նրան պոռնիկ դարձրեցին: Հետո ի՞նչ յեղավ-  
կյանքը ծաղրոււմ և Սիրունյանին. յերեխան մեռաւ  
իսկ նա քայլեց հարթված ճանապարհով: կյանքից  
վիրավորված, թշնամիներից անպատված, բարեկամ-  
ներից ձգած, Սիրունյանը մտնոււմ է պոռնկատուն-  
գամված սոսկալի արհեստին, դրոշմված դեղին տոմ-  
սով, նա դուրս գալու ճար չեր գտնոււմ և նա յելք չէ՝  
գիտեր: Սիրունյանի կյանքի այս կիսի մասին շատ  
խոսեց հասարակական մեղադրողը. նրա համար Սի-  
րունյանի կյանքի սկիզբը հոգեկան մեծ վողբերգու-  
թյուն էր: Պոռնկատունը, հասարակաց տունը թույն է:  
վորն ընդմիշտ թունավորոււմ է մարդուն: Ինչ բան  
հին է՝ սոսկալի ծանրութեամբ ընկնոււմ և մարգու-  
վրա և ազատվելը նրանից շատ դժվար է: Հանքահո-  
րի մեջ աշխատող ձին, տարիներ շարունակ մնալով

այդ մութ տեղում, կույրանում և կույրանում և  
 այն պատճառով, վոր մթության մեջ և հավիտյան  
 խավարի մեջ տեսնելը հարկավոր չէ. միևնոյն պատ-  
 ճառով չեն տեսնում և գետնի տակ ապրող խլուրդ-  
 ները: Հասարակաց տանը ապրող կի՛նը, վորը հաճա-  
 խորդին տալիս և իր մարմինը, վորը ջանք և դործ դը-  
 նում մոռանալ թէ կա հոգի, բանականություն, ու-  
 բախություն, վորը գիտակցությունը լցնում և գի-  
 նով, վորը յուրաքանչուր ժամ թուճավորում և ինքն  
 իրեն, դառնում և մի կոյր, անհոգի, առանց բանա-  
 կանության կենդանի, վորը վոչինչ բացի իր արհես-  
 տից չը գիտէ: Յեւ այդ վիճակին հասավ Սիրունյա-  
 նը: Ժամանակը վոչնչացրել և հոգու ցավը, արհեստը  
 բռնել և ամբողջ կյանքը և դարձրել և Սիրունյանին՝  
 ծաղկավիթիթ, անփորձ և կենսութախ աղջկանից մի  
 հարձ. ծուլության և զվարճության մեջ կործանվող  
 բուրժուազիայի համար մի ստրուկ, վորին դնում են  
 կիրքերին և բնազդներին բավականություն տալու  
 համար: Ահա նա Սիրունյանը՝ վոճրագործը, աշխա-  
 տանքի ճակատ լքողը—հասարակական մեղադրողի ա-  
 սելով: Ահա նա՝ անբաղա զոհը, կողոպտվածը, հին  
 հասարակության հազարավոր հանցանքներից ճնշվածը  
 ահա Սիրունյանը՝ իմ պաշտպանյալը: Ահա այսպես և  
 անցել Սիրունյանի կյանքը թագավորի կարգերի ժա-  
 մանակ: Այստեղ նա մեղք չունի, ինչպես և համա-  
 ձայն և և հասարակական մեղադրողը. ապա Քնչն և  
 հանցանք համարվում, վմբն և նրա վոճիրը: Հեղափո-  
 խությունը սպանեց հին կյանքը, մաքրեց այն, ինչ  
 դարերով շինված էր պրուխտարիատի և գյուղա-  
 ցիների արյան ու վոսկոտների վրա: Հեղափո-

խությունը ջարդեց շղթաները, վոչնչացրեց հին  
 արժեքները. և այդ մեծ տակնուվրայի կատար-  
 ման մեջ դրեց նորկյանքի հիմքը: Մեծ դեպ-  
 քերը, վորոնց գոչյունը ամբողջ Յեզրոսկան դղրդա-  
 ցրեց, զարթեցրին համաշխարհային պրոլետարիատին,  
 լուսավորեցին արշալույսի ճառագայթներով կյանքի  
 նոր ուղիները: Շատ բան է տրված, գուցե արված է  
 կարեվորագույնը, բայց... դեռ ելի շատ բան կա անկու-  
 գաղափարները կյանքի մեջ կիրառելու համար: Դեռ  
 մնացել է պրոլետարական նոր կուլտուրայի գործը-  
 նոր ճակատը ցայտուն կերպով ակնհայտ դարձավ,  
 այսինքն՝ հին իշխանությամբ պատվաստած խավարի  
 և տգիտության ճակատը: Իր տհուելի մեծությամբ յե-  
 բեվան է գալիս նոր աշխատանք: Այդ աշխատանքը  
 նոր հեղափոխություն պետք է անի. հեղափոխություն  
 հոգու, մտքի, վորպեսզի ամբացնել տիրածը: Կրակի  
 ու պողպատի ճակատում տարած հաղթություններից  
 իսկապես ողտվելու համար պետք է հարստացնել աշ-  
 խատավորների դիտակցությունը. պետք է իսկական  
 ոնունդ տալ նրա ուղեղին, և, փշրելով հին սովորու-  
 թյունները, հավատալիքները, նախապաշարումները,  
 ստեղծել և ձուլել իսկական պրոլետարական աշխարհ-  
 հայեցողություն: Ահա այն, ինչ պետք է լինի մեծ  
 դեպքերի շարունակությունը:

Իսկ մենք շատ ու շատ ուշ և ուշագրություն  
 ենք նվիրել տնտեսական ճակատին, համաճարակների  
 կռվին: Այնքան շատ բան է խլել մեզնից սովը, տյն-  
 քան է մեզ վրա անդրադարձել շրջապատումը, վոր  
 շատ քիչ բան ենք արել կրթական գործում: Հեղափո-  
 խությունը Սիրիանունյանին ասիլ ձգեց. նա մտավ ծա-

աայության և թվում եր վոր հին վերքերը բուժվելու  
 են ու անցցալը ֆնալու եր հիշողության մեջ: Բայց  
 դժվար, շատ դժվար եր նրան հաջողվում: Քաղցած,  
 հնից հոշոտված, նա վախվխելով ընթանում եր նոր  
 ճամբով: Անողոք կերպով նա տանջվում եր քաղցից,  
 բայց ավելի շատ նրանցից, վորոնք հիշեցնում էին  
 նրան միշտ հինը: Այդ բանը հիշեցնում էին նրան  
 շատերը. նրանք, ով սովոր եր տեսնել նրան փողոցում,  
 ով պատահել եր նրան հասարակաց տանը, ով գնել  
 եր նրան: Չէին կամենում մոտանալ հին Սիրուհյան-  
 նին. նրանք չէին ուզում տեսնել նրա մեջ նոր մարդ-  
 նրանք հետևում էին նրան, կանչում, կանչում էին  
 դեպի հինը. ծանր եր Սիրուհյանի համար: Նա կռիվ  
 եր մղում ինքն իրեն հետ, քաղցը տանջում եր, քաղցը  
 գոչում եր՝ գնա, գնա նորից. իսկ նրանք, վորոնք  
 միշտ նրանք հետամտում էին, բոթում էին նորից  
 փոսը, խոստանալով դրա համար հաց: Սիրուհյանին  
 թվում եր, վոր հին բծերը լվանալ անկարելի է, վոր  
 անցկացրած խայտառակությունը այրում է և մատ-  
 նում նրան, վոր նոր կյանքը նրան չի ընդունում և  
 նա հեռացավ ծառայությունից ու հեռացավ խալաու:

Ուսանող Գարունյանը ասաց, վոր Սիրուհյանը  
 ծառայել չէր կարող: Յերիտասարդ ինտելիգենտը  
 խոստովանվում է, վոր Սիրուհյանի շրջապատողները  
 հրում էին նրան դեպի փողոց ու նա չգիմացավ:  
 Ընկեր Գարունյանի խոսքերը մեզ համար գնահատելի  
 են ու բնորոշ: Յերիտասարդ, առողջ Գարունյանը մի-  
 ազն եր, վոր լավ եր վերաբերվում Սիրուհյանին: Իսկ  
 ինչով ոգնեց նրան. ինչ արեց նրա համար, ինչպես  
 յգնեց նրան կեղտի ու լրբության դեմ մղած կռիվում:

Նա վոչինչ չափեց Սիրունյանին: Նա չաջակցեց Սի-  
 րունյանին վոչ բարոյապես, վոչ ել Ֆիզիքապես: Վոր-  
 քան բնորոշ ե Գարունյանի վարքը մեր իրականու-  
 թյան ինտելիգենցիայի համար, վորը գեղեցիկ գաղա-  
 փարների ճամբին ամեն քայլափոխում սայթակվել  
 դիտե: Բարեհոգություն, ապարդյուն բաղձանքներ,  
 քնդհանուր խոսքեր ժողովրդի բաղղամորության մա-  
 սին և միեւնույն ժամանակ խորին դատարկություն,  
 կամազրկություն, ուժերն ու ցանկությունները սպա-  
 նիչ կրավորականություն: Գարունյանը իր վարմուն-  
 քով վերջին հարվածը հասցրեց. և գլխովեց Սիրունյա-  
 նը ու հասավ դատարան: Ինչո՞ւ Սիրունյանը չկովեց  
 մինչեւ վերջին ույժը, հարցնում ե հասարակական մե-  
 դադրողը. վորովհետեւ հին կյանքը սպանել եր նրա  
 մեջ բոլոր ուժերը: Ծնողներից նա ստացել եր ժառան-  
 գություն՝ կամքի թուլություն. նրա արյան մեջ  
 հարբեցողություն կա: Այսպես ուժասպառ և թույլ  
 դուրս յեկավ նա հեղափոխության շնորհիվ բանտից,  
 իսկ հին կյանքը նրա համար բանտ եր: Սիրուն-  
 յանի վողբերգությունը մեր խայտառակությունն ե,  
 վոր աշխատավորների ազատագրման, այս ուրախ ու  
 ամենակարող որերին—վոչ վոք շոգնեց Սիրունյանին  
 դեն շարտելու լուծը, հեռանալ ճնշող սարսափից և մաս-  
 նակից լինել նոր կյանքին: Սիրունյանը չեհանցավորը.  
 հանցավորը—մենք յենք, վոր վոչինչ չարեցինք նրանց  
 համար, վորոնց խեղդել ե հին կյանքը, վորոնց համար  
 դժվար եր վտոքի յեւնել և գնալ բոլորի հետ միասին:  
 Դաժան եր Սիրունյանի համար կյանքը, բայց նրա  
 հոգին շղաթանացավ, նրա մեջ չարություն չկար: Իը  
 մարմնի ծախելուց ստացած շնչին կոպեկներով միշտ

ել ոգնել ե իր հարեւաններին և ուրիշի յերեխաներին: Միրունյանը, չնայած իր բոլոր փորձանքներին, ելի մնացել ե մարդ: Վոչ թե դատել պետք ե նրան, վոչ թե մեղադրել—պետք ե: Վոչ, ոգնել պետք ե: Պետք ե ցույց տալ վերջապես իսկական ոգնություն. պետք ե տալ հնարավորություն սկսել նոր աշխատավոր կյանք: Քիչ բան ե մնացել մեզ ասելու. մի քանի խոսք յեվա այն հարցի մասին, վոր Միրունյանը գիտակցորեն վարակել ե Միամիտյանին սիֆիլիսով. ինչ տվյալներ ունի դատարանը, հասարակական մեղադրողը՝ իմ պաշտպանյալին մեղադրելու այդպիսի մի ծանր վոճրի մեջ, ճւր ե ապացույցը. Միրունյանը գիտեր իր տկարության մասին. ինչո՞ւ, ապա ինչո՞ւ չեր բժշկվումս և կմնա հանելուկ և սնհասկանալի, յեթե մենք չաշխատենք պարզաբանել մանրամասնությունը:

Հիվանդության առաջին շրջանում Միրունյանը ունեցել ե վերք, սիֆիլիսի վերք. եքսպերտը տասց, վոր դա չի ցավում և հաճախ հիվանդը չի ել նկատում: Այդ վերքը կարող ե դուրս գալ դործարանների ներսում և վոչ մի բանով չը յերեվալ. հասկանալի ե, թե՛ ինչպե՞ս Միրունյանը չի ել նկատել իր հիվանդության սկիզբը. նա չի իմացել վոր անամոթի մեկը, կենդանու բնագոյներով կույրացած, յեկել ու վարակել ե իրեն. ի հարկե նա չգիտեր. Միրունյանը, ինչպե՞ս և բոլոր պոռնիկները, միշտ ել ապրել ե սիֆիլիսով վարտկվելու. սոսկալի վտանգի սարսափի ու յերկյուզի տակ. նա միշտ ել սպասել ե այդ սոսկալի հիվանդությանը, իր արհեստի ուղեկցին: Նա շատերին ե տեսել և ի հարկե չեր թաղցնի իր հիվանդությունը կը բժշկվեր, հենց միայն նրա համար, վոր ելի սկսեր

աշխատելը, վոր քաղցից չը մեռներ մի վորեւի ցանկապա  
 տի տակ: Սիրունյանը հիվանդության յերկրորդ շրջա-  
 նում ունեցել է ցան. բայց չե վոր այդ ցանը կարող  
 է շատ քիչ տեղ բռնել և յերեւման գալ մի քանի բծե-  
 րի նման. Սիրունյանը ցանն էլ չի տեսել, գուցե և  
 տեսել է, բայց կարծել է վոր դա պատահական բան  
 է, կեղտից, անմաքրությունից առաջ յեկած: Մեզնից  
 շատերը չեն տեսել սիֆիլիսոտներին. պետք է բժշկ  
 լինել, վոր ջոկել այդ հիվանդության տեսակը ու  
 բնույթը: Ի հարկե ավելորդ է ասել վոր նա գիտակ-  
 ցորեն վարակել է ուրիշին: Սիրունյանը չը գիտեր իր  
 հիվանդության մասին, վոչ վոք չի ցանկանա իր կո-  
 բուստը, իր մահը, մանավանդ սիֆիլիսի հետեւանք-  
 ներից: Ընկեր դատավորներ ձեզ է պատկանում վեր-  
 ջին խոսքը. ձեզնից է կախված Սիրունյանի և նրա  
 նմանների կյանքը: Դուք, և միայն դուք կարող եք  
 շունչ փչել մարած ուժերին: Մտածեցեք նրա մասին  
 և ոգնեցեք, փրկեցեք մարդին: Դուք կարող եք, և  
 պետք է անեք: Հին կյանքի հաշմանդամներին մենք  
 պետք է բժշկենք, բժշկենք և բժշկենք: Բժշկենք Սի-  
 րունյանին, տանք նրան հնարավորություն ազնիվ  
 միջոցով աշխատելու և նա կգա մեզ հետ, նա կը լինի  
 մեր շարքերում: Թող ձեր վճիռը կոչնակի պես կանչի  
 Սիրունյանին և նրա նմաններին դեպի նոր կյանք,  
 թող ասի նրանց, վոր բանվորների և գյուղացիների  
 իշխանությունը վոչ վոքից վրեժ չի լուծում, վոչ վո-  
 քի չի պատժում հին կյանքի գործած հանցանքի հա-  
 մար, վոր բանվորների և գյուղացիների իշխանու-  
 թյունը աշխատավորների շահերի պաշտպանն է: Ըն-  
 կեր դատավորներ դուք իմ պաշտպանյալին կյանք  
 կը տաք:

ԴԱՏԱՎՈՐ.— Խոսքը տրվում է մեղադրյալին, քաղաքացի Սիրունյան ինչ կարող էք դուք ասել ձեր մասին:

ՍԻՐՈՒՆՅԱՆ.— (Վեր ե կենում յեզ արտասու-  
լից ձայնով) Մեղավոր չեմ յես, հավատացեք մեղա-  
վոր չեմ: Կյանքն ինձ ստիպեց փողոց ընկնել, և կոր-  
ստյան մատնել ինքս ինձ: Ուղեցի աշխատել, ցան-  
կացա ապրել իսկական կյանքով, լավ կյանքով,  
բայց բոլորը այլ կերպ դուրս յեկավ: (Ապիս ե,  
պաշտպանք վեր ե կենում ու ջուր տալիս մեղադր-  
յալին, Սիրունյանք խմում ե ջուրը ու շարունա-  
կում) 16 տարեկան եի, յերբ նոր նոր ուղում եյի  
մարդ դառնալ, խաբեցին ինձ, խաղացին, դեն շրպը-  
տեցին խայտառակությամբ. և յես հանցավոր, լիբը  
ու անառակ յեղա: Այդ որից սկսվեց ծանր կյանքս.  
հարադատ դավակս կործանեց ինձ: Մեզում եի նրան  
փրկել, իսկ դուրս յեկավ, վոր նրան չը փրկեցի, իսկ  
ինձ կործանեցի. կործանեցի: Աշխատանք եի փնտ-  
ռում, յերեխայի հետ չեյին վերցնում. տնից ել ար-  
տաքսեցին. ինչ անել: Գնացի փողոց, գնացի հաց  
աշխատելու: Ծնողներս կանչեցին ինձ իրենց մոտ,  
բայց յես արդեն ել չեի կարող, կեղտոտված եր իմ  
կյանքը, ապականված եր նա: Յես ընտանիքի մեջ  
չեի կարող ապրել, խղճացի նրանց, իմ պատճառով  
նրանց հանգիստ չեին տալիս, հալածում եին նրանց,  
իսկ ինձ վրա ել մատով եին ցոյց տալիս, ահա ծա-  
խու ապրանքը: Չեի կարող գնալ ես նրանց մոտ, չեի  
կարող: Իսկ ինձ իմ ամբողջ կյանքի ընթացքում  
մեկն ու մեկն խղճաց. ոգնեց ինձ մեկն ու մեկը,  
վոր իսկական ճանապարհի վրա դուրս գամ: Վոչ վոք

Ինձ հետ մարդավարի չը խոսեց. վոչ վոք: Ահա այս-  
 տեղ, առաջին անգամ, այն ել ահա նա (ցոյց տալով  
 մեղադրողի վրա) ասում է, վոր ես փչացած եմ,  
 պոռնիկ եմ: Իսկ ինչո՞վ եմ յես հանցավոր. նա ասում  
 է, վոր յես գիտեի, վոր հիվանդ եմ, ուզում եի ու-  
 բիշներին վարակել. իսկ յես, ազնիվ խոսք, վոչինչ  
 չը գիտեի, յեթե իմանայի, կը բժշկվեյի: Չե վոր վոչ  
 վոք չի ուզում կենդանի թաղվել: Ասում են ինչո՞ւ չը  
 ծառայեցի, ինչո՞ւ ծառայությունս թողեցի. քիչ էին  
 վճարում դրա համար ել չը ցանկացա ծառայել: Մի-  
 թե՞ ես քաղցի սովոր չեմ, միթե՞ սուլը ինձ համար  
 սարսափելի ե: Վոչ. այդ չեք պատճառը, վոր թողեցի.  
 այդ չեք պատճառը, վոր տանը չը մնացի: Հաճախ  
 նստած կար եյի անում յես. մեկ ել տեսնեմ գալիս են  
 հին ծանոթներս ու խայտտոռակում: Ծառայելն անկա-  
 րելի եք, տանը մնալը անհնար եք: Թողեցի ծառա-  
 յությունն ել, ընտանիքն ել: Շատ ցավեր եմ տեսել  
 յես. վոչ յես հանցավոր չեմ: Մեզ տեսնողը կարծում  
 է ուրախ ենք, յերջանիկ ենք. թազցնում ենք մեր  
 կսկիծը, վոչ վոքի մեր հոգին ցոյց չենք տալիս,  
 քայց իսկապես մենք ամենաանբախտն ենք, մենք  
 կյանքից զրկվածներ ենք, ապրում ենք կենդանիների  
 պես, իսկ հետո ցանկապատի տակ կը վոչնչանանք,  
 կամ հիվանդանոցում կը փառենք: Դատեցեք ինձ,  
 հայհոյեցեք, բայց պետք է խղճալ մեզ, խղճալ: Ող-  
 նեցեք ինձ, թոյլ տվեք դուրս գալ կեղտոտ փոսի մի-  
 ջից. ոգնեցեք (լալիս է):

ԴԱՏԱՎՈՐ:—Դատը վերջացած է: Հեռանում ենք  
 խորհրդակցելու (բոլորը վոսքի են կանգնում):

### ՏԵՍԻԼ III

Առանց գասավորի յեվ ասեճակալների, բեսի վրա մնացողները միսիանց հես գոււցոււմ են ցածր ձայնով. էի, հեսո մոսեճոււմ է քարսոււղարը):

**ԲԱՐՏՈՒՂԱՐ.**— Խնդրեմ վոտքի կանգնել, դատավորները գալիս են. (բոլորը վոսքի են ելնոււմ ու մնոււմ են կանգնած)

**ԴԱՏԱՎՈՐ.**— Հանոււն Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Յերիվանի Ժողովրդական Դատարանը նախագահությամբ, (ազգանոււն) և անդամակցությամբ (յերկու ասեճակալի ազգանոււնները) քննելով 1923 թ. (դաքի որաքիվը) ին Սիրոււնյանի գործը ըստ մեղադրանքի կարմիր բանակային Միամիտյանին սիֆիլիսով վարակելու մեջ, լսելով վկաների և եքսպերտի ցուցմոււնքները, լսելով մեղադրողին, պաշտպանին և մեղադրյալի վերջին խոսքը, վորոշեց՝ քաղաքացի Սիրոււնյանին հանցավոր ճանաչել պոռնկությամբ պարապելու մեջ. գիտակցորեն ուրրշին սիֆիլիսով վարակելու մեղադրանքը չի ապացուցված: Ի նկատի ունենալով 1) Սիրոււնյանի պրուլետարական ծագոււմը, 2) այն ուժեղ ցնցոււմները, վորը նա կրել է թագավորի կարգերի ժամանակ, 3) շրջապատողների վոճրային վերաբերմոււնքը դեպի նա, 4) նրա հիվանդագին ժառանգաւկանությունը դատարանը վորոշեց՝ քաղաքացի Սիրոււնյանին զետեղել հիվանդատնոց բժշկվելու համար և տուաջարկել Սոց. Ապահ. Ժողկոմին և բանվորական ուժերի հաշվեառ մարմնին տալ հնարավորություն քաղաքացի Սիրոււնյանին զբաղվելու, բժշկվելուց հետո, արտադրողական աշխատանքով, վորը ապահովեր նրա ապրուստի նվազագոււյնը: Վկա Միամիտյանին դատի յենթարկել, մեղադրելով նրան պոռնկությունից ոգավելու մեջ: Վճիռը վերջնական է և բողոքի վոչ յենթակաւ:

Դ. Ս. Ր. Ա. Գ. Ո. Կ. Յ. Ր.  
ԴՐԱՆԱՐԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045147

[254]

A  $\frac{I}{2589}$



ԳԻՆՆ Ե՛ 25 ԿՈՊ.

